



5 Երկրաշարժը խթանում է համագործակցությունը



6 XXI դար. մարտահրավերներ եւ սպառնալիքներ



10 «Կապույտ մահը» մեր փնտրում.



11 Անցյալ դարի վթարները



ով իրազեկված է, մա ղաշտղանված է **ապրտականարգթերթ** 28-29 (397-98) 27.7.2012 - 31.8.2012 www.emergency.am

Հայաստան-Շվեյցարիա. **համագործակցության նոր կամուրջներ**

Հուլիսի 20-ին ՀՀ ԱԻ նախարար Ա. Երիցյանն ընդունել է Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության տարածաշրջանային գրասենյակի տնօրենի տեղակալ, մարդասիրական ծրագրի ղեկավար Մաթիաս Վայնգարթին եւ Հայաստանյան գրասենյակի ազգային ծրագրի պատասխանատու Սերգեյ Հովհաննիսյանին:

Գործակալության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ մինչեւ 2014 թ. վերջը նախատեսվում է ՀՀ ԱԻ նախարարության կազմում ձեւավորել միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) պահանջներին համապատասխան մեկ միջին թիւ, որի փորձի հիման վրա կստեղծվի նաեւ 10 թիւ մարզերում:

Հանդիպման նպատակն էր քննարկել INSARAG-ի պահանջներին ՀՀ ԱԻ թիւի համապատասխանեցման գործընթացի խնդիրները:

ՀՀ ԱԻ նախարարության եւ Շվեյցարիայի Համադաշնության միջեւ համագործակցությունը հիմնվում է ՀՀ եւ Շվեյցարիայի Համադաշնության կառավարության միջեւ 2004 թ. ապրիլին Երեւանում ստորագրված «Տեխնիկական, ֆինանսական եւ հումանիտար համագործակցության մասին» համաձայնագրի եւ 2008 թ. դեկ-



տեմբերին Երեւանում ստորագրված «Արտակարգ իրավիճակների ժամանակ համագործակցության մասին» համաձայնագրի դրույթների վրա:

Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության հետ համատեղ 2004-2010 թթ. իրականացվել է «Արձագանք» ծրագիրը, որի նպատակն էր հզորացնել արտակարգ իրավիճակներին արձագանքման մարզային կառույցները՝ փրկարարների ուսուցման եւ համապատասխան սարքավորումների տրամադրման միջոցով: Ծրագրի շրջանակներում 63 հրշեջ-փրկարարական ջոկատ, այդ թվում նաեւ հատուկ նշանակության 3 ջոկատ, հազեցվել են սարքավորումներով: Ախտորանի հրշեջ մասի տարածքում



կառուցվել է հրշեջ-փրկարարական փորձաիրապարակ: Արդյունքում՝ ՀՀ ԱԻ Փրկարար ծառայությունն ունի ուսուցում ստացած ավելի քան 2200 հրշեջ-փրկարարներ եւ կամավորներ՝ պատրաստ արձագանքելու աղետներին:

2010 թ. հունիսի 18-ին Երեւանում ՀՀ կառավարության եւ Շվեյցարիայի Համադաշնության կառավարության միջեւ ստորագրվել է «Տեխնիկական եւ ֆինանսական համագործակցության մասին Հայաստանում արտակարգ իրավիճակներին արձագանքելու համակարգին օժանդակության վերաբերյալ» համաձայնագիր եւ հաստատվել «Արձագանք. Բուժմիավորներ» ծրագիրը:

Շվեյցարական գործակալությունն

աջակցում է նախարարությանը նաեւ նորակառույց ճգնաժամային կառավարման կենտրոնը տեխնիկական եւ տեղեկատվական սարքավորումներով հագեցնելու, ինչպես նաեւ խորհրդատվություն տրամադրելու ուղղությամբ:

ԱԻ նախարարը հյուրերին ներկայացրեց նախարարության նոր քայլերն ու ձեռքբերումները, աղետակայուն պետություն կառուցելու տեսլականի ճանապարհը հաղթահարելուն կոչված ծրագրերն ու գործուն միջոցառումները: Արմեն Երիցյանը նշեց, որ այդ ճանապարհին Շվեյցարիայի զարգացման ու համագործակցության գործակալությունը լավագույն գործընկերն է:

Մաթիաս Վայնգարթն ընդգծեց, որ ՀՀ ԱԻ-ն իրենց բոլոր ամփոփումներում ներկայացվում է որպես հուսալի ու ստեղծագործ գործընկեր, որը ստացած յուրաքանչյուր օգնություն ավելացնում ու զարգացնում է, եւ որը յուրաքանչյուր նոր հանդիպմանը հաճելիորեն զարմացնում է:

Կողմերը պայմանավորվեցին մինչեւ 2016 թվականը Հայաստանում զարգացնել INSARAG-ի բոլոր հինգ պահանջներին համապատասխան ազգային կարողություններ՝ որոնողական, փրկարարական, աղետների բժշկության, ճգնաժամերի կառավարման եւ նյութատեխնիկական:

Վերակառուցվող կրկեսի գմբեթն անվտանգ իջեցվեց

Հուլիսի 21-ին, ժամը 15:40-ին Երեւանի կրկեսի վերակառուցվող շենքն ապամոնտաժելու նպատակով պայթեցում իրականացվեց մայրաքաղաքի Ազաթանգեղոսի 1 հասցեում:


Քանի որ շենքի գմբեթը գտնվում է վթարային վիճակում, եւ մասնակի ապամոնտաժումը վտանգավոր է աշխատակիցների համար, ուստի նախապատվություն էր տրվել պայթեցման եղանակին:

Հստակ ու նուրբ հաշվարկված հզոր պայթյունի շնորհիվ, առանց վնասելու պատերը, վերակառուցվող կրկեսի գմբեթն անվտանգ իջեցվեց:

Իր պատասխանատվության սահմաններն անընդհատ ընդլայնող Արտակարգ իրավիճակների նախարարությունը ձեռնամուխ է եղել պայթեցնող խմբի ձեւավորմանը: Պայթեցնող խմբի մեջ են ներգրավվել ամենաբարձր կարգի պրոֆեսիոնալներ: Նման նուրբ աշխատանքներ կատարվեցին նաեւ 2011 թ. դեկտեմբերին՝ Վանաձոր-Ալավերդի մայրուղու 35-րդ կմ-ին հարակից տարածքում, իսկ 2012 թ. ապրիլին՝ Շիրակի մարզի Ջաջուռ-Մայիսյան երկաթգծի 7-րդ կմ-ի հատվածում՝ ձմափորը կանխարգելելու նպատակով:

Պայթեցնող խմբի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված էր ոչ պրոֆեսիոնալ ապամոնտաժումների ու պայթեցումների հետեւանքով արձանագրված մի քանի ողբերգական պատահարներով:

Կրկեսի հին շենքի պայթեցման անվտանգությունը մեծ մասամբ ապահովվեց նաեւ ոստիկանության հնուտ աշխատանքով:



Սունկը՝ թունավորման պատճառ

Հուլիսի 23-ին Լոռու մարզից հայտնել են, որ ժամը 17.10-ին սննդային թունավորման նշաններով Վանաձորի թիվ 1 հիվանդանոց են տեղափոխվել Վանաձորի Լեւոնգրայան փողոցի թիվ 5/2/2/9ա տնակի բնակիչներ՝ 1942 թ. ծնված Լուիզա Հակոբյանը, 2009 թ. ծնված Մեմուա Արյանը եւ 1996 թ. ծնված Հարություն Սաղոյանը, «Նարեկ» մանկական հիվանդանոց է տեղափոխվել Վանաձորի Լեւոնգրայան փողոցի թիվ 5/2/4/12 տնակի բնակիչ, 2002 թ. ծնված Արկադի Կարապետյանը:

Նախնական տվյալներով՝ տուժածները կերել են շուկայից գնված սնկից պատրաստված կերակուր:

Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը ծանր է:

Կոչ ենք անում բնակիչներին զննումներ չկատարել փողոցային առետրի կետերից՝ փոխարենն օգտվելով անասնաբուժական եւ սանիտարական ծառայություն ունեցող շուկաներից ու խանութներից:

Պետք է զերծ մնալ նաեւ անտառից ինքնուրույն հավաքած սնկից կերակուրներ պատրաստելուց եւ ժողովրդական միջոցներով սնկի անվնաս լինելը ստուգելուց:

Սննդամթերքի անվտանգության ծառայությունից հայտնում են, որ վաճառքի ենթակա սունկը պետք է օրենքով սահմանված կարգով անցնի մասնագետների կողմից իրականացվող պարտադիր սանիտարական փորձաքննություն, որից հետո տրվում է մթերքի անվտանգությունը հաստատող համապատասխան կտրոն: Սունկ զննելուց առաջ պահանջեք վաճառողից ներկայացնել այն:



արագ արձագանքման ծառայություններ

Ավտոպատակահար Շիրակի մարզում



ԱԻՆ
միացյալ հեռախոսահամարն է
911

Օձերն անհանգստացնում են

Հունիսի 19-26-ը ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոնում բնակիչներից ահազանգեր են ստացվել, որ օձեր են նկատվել Երեւանի Արաբկիրի 13/2 տան մոտ, Զարուբյան 60 տան մոտակայքում, Արարատյան 62/1 շենքի 413-րդ բնակարանում, Դավիթաշեն վարչական շրջանի 4-րդ թաղամասում, Երեւանի Հաղթանակ թաղամասի 1-ին փողոցում, Իսակովի 26 շենքում («Ուրարտու») հյուրանոցային համալիր), Գյումրիի Ֆրունզե փողոցի թիվ 156 տանը, Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում՝ «Ձոնտիկներ» կոչվող ամառանոցային թաղամասում եւ Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղում

Դեպքի վայրեր մեկնած փրկարարների, ճակատագրաբար խմբերի եւ հատուկ մասնագետի կողմից տարածքն ուսումնասիրելու արդյունքում օձ չի հայտնաբերվել:

• Հունիսի 21-ին, ժամը 16.24-ին ահազանգ է ստացվել, որ Աշտարակի Մուղնի թաղամասի 1-ին փողոցում բնակիչներն օձ են նկատել, որին բռնելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել Արագածոտնի մարզային փրկարարական ջոկատը:

Փրկարարները հայտնաբերել են գյուրգա տեսակի օձ եւ տեղափոխել անվտանգ տարածք:

Օձի խայթոց

Հունիսի 19-ին Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 21.00-ի սահմաններում օձի խայթոցից թունավո-



Հունիսի 26-ին, ժամը 03.32-ին ահազանգ է ստացվել, որ Երեւան-Գյումրի ավտոճանապարհի 92-րդ կմ-ում (Լանջիկ գյուղի մոտ) տեղի է ունեցել ավտոպատակահար. կան տուժածներ, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել Մարալիկի հրշեջ-փրկարարական ջոկատի օպերատիվ խումբը եւ մարզային փրկարարական ջոկատը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում բախվել են «ԳԱԶ-24» մակնիշի 07 ՕՕ 665 պ/հ (վարորդ՝ Երեւանի բնակիչ, 1958 թ. ծնված Աշոտ Ահարոնյան) եւ «Օպել Վեկտորա» մակնիշի 27 ՍԼ 940 պ/հ (վարորդ՝ Գյումրիի բնակիչ, 1955 թ. ծնված Սարգիս Հովհաննիսյան) ավտոմեքենաները:

Պատահարի հետեւանքով «Օպել Վեկտորա» մեքենայի վարորդը եւ ուղեւոր՝ Գյումրիի բնակիչ, 1953 թ. ծնված Սարգիս

րումով Աշտարակի հիվանդանոց է տեղափոխվել Օշական գյուղի բնակչուհի՝ 1991 թ. ծնված Տաթևիկ Եղիազարյանը: Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

Քարաթափման վրանգ

Հունիսի 19-ին, ժամը 13.30-ին ահազանգ է ստացվել, որ Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի Հարավ-արեւմտյան թաղամասի 3-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 11 տան մոտ առկա է քարաթափման վտանգ, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Ժամը 14:00-ին դեպքի վայր է մեկնել ՄՓՎ ՕԽ-Գ՝ ՄՓՎ ԲՊ բաժնի պետ փ/ծ կապիտան Գ.Հակոբյանի գլխավորությամբ:

Պարզվել է, որ Դ. Հակոբյանին պատկանող տունը գտնվում է հավանական քարաթափման տեղամասից մոտ 60 մ հեռավորության վրա, եւ Լանջի թեքությունը կազմում է

60-65 աստիճան: Ժայռաքեղոյների տեղաշարժմանը նպաստում են հիմնականում անձրեւաջրերը, որոնք, լցվելով ժայռաքեղոյների ճեղքերը, վնասում եւ թուլացնում են հիմքը: Վտանգն ակնհայտ է. հսկա ժայռաքեղոյները սպառնում են տանը եւ հարակից շինություններին: Տարածքի ուսումնասիրման արդյունքները կներկայացվեն Գեղարքունիքի մարզպետարան:

Կարկտահարություն

Հունիսի 19-ին Վայոց ձորի մարզի Արտաբույն գյուղից տեղեկություն է ստացվել, որ ժամը 15.30-ի սահմաններում տեղացած կարկտի հետեւանքով վնասվել են գյուղատնտեսական նշանակության ցանքատարածքները:

Հասցված վնասի չափը ճշտվում է: Տարածքը ՀՀ ԱԻՆ «ՄԵՎԱՍԾ» ՊՈԱԿ-ի կողմից չի վերահսկվում:



Հակոբյանը տեղում մահացել են: Նախքան փրկարարների ժամանումը՝ «Օպել Վեկտորա» ավտոմեքենայի ուղեւորներ, Գյումրիի բնակիչներ՝ 1985 թ. ծնված Գրիգոր Աբրահամյանը, 1981 թ. ծնված Վրեժ եւ 1982 թ. ծնված Վազգեն Հակոբյանները, «ԳԱԶ-24» ավտոմեքենայի ուղեւոր՝ Երեւանի բնակիչ, 1979 թ. ծնված Արամ Պետրոսյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Գյումրիի «Գյուլբենկյան» բժշկական կենտրոն:

Փրկարարները «Օպել Վեկտորա» մակնիշի ավտոմեքենայից դուրս են բերել վարորդ Ս. Հովհաննիսյանի դին եւ «ԳԱԶ-24» ավտոմեքենայի վարորդ՝ 1958 թ. ծնված Աշոտ Ահարոնյանին, որը նույնպես տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Գյումրիի «Գյուլբենկյան» բժշկական կենտրոն: Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը ծանր է:

Մեքենան ընկել է գետը

Հունիսի 24-ին, ժամը 01.25-ին ոստիկանությունից տեղեկություն է ստացվել, որ Հրազդան-Հանքավան ճանապարհի 30-րդ կմ-ի մոտակայքում տեղի է ունեցել ավտոպատակահար, կան տուժածներ, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել Կոտայքի մարզային փրկարարական ջոկատը:

Դեռեւս չբացահայտված հանգամանքներում «Մեքսեդես» մակնիշի 09 LS 282 պ/հ ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթելակի մասից եւ շրջվել Մարմարիկ գետը:

Նախքան փրկարարների ժամանումը՝ Արմավանի բնակիչ, 1983 թ. ծնված Հակոբ Դովաթյանը, Կոտայքի մարզի Վերին Պտղոնի գյուղի բնակիչ, 1978 թ. ծնված Զարիկ Թորոսյանը եւ Երեւանի բնակիչ, 1986 թ. ծնված Աղաս Մկրտչյանը >>>

միջազգային լուրեր

Չինաստանը՝ մոլազար տարերքների զոհ

Չինաստանը ջրի մեջ է հայտնվել: Տեղատարափ անձրեւները Չինաստանի համար իսկական աղետ են դարձել: Հունիսի 20-ից սկսած հորդառատ անձրեւները չեն դադարում Չինաստանի 22 մարզերում: Աղետի հետեւանքով Չինաստանում զոհվել է 111 մարդ, 47-ը համարվում են անհետ կորած: Ոչնչացվել է 54 տուն, մոտ 150 հազար տուն վնասվել է: Ընդհանուր առմամբ ողջ երկրում աղետից տուժել է ավելի քան 9 միլիոն մարդ, 1,18 միլիոն մարդ տարահանման է ենթարկվել:

Վերջին 60 տարվա ընթացքում ուժեղագույն տեղատարափ անձրեւների հետեւանքով Չինաստանի մայրաքաղաքը ճայնպետ հայտնվել է ջրի մեջ: Վերջին ամսում այս քանակությամբ տեղումներ Պեկինում եղել են 1951 թ.-ին:

Տարերքի հետեւանքով Պեկինում զոհվել է 37 մարդ, կան բազմաթիվ վիրավորներ, հազարավոր մարդիկ տարահանվել են, անորոշ ժամանակով հետաձգվել է ավելի

քան 500 ավիաչվերթ: Մոլազար տարերքից տուժել են քաղաքի ենթակառուցվածքները: Շատ փողոցներ հեղեղված են ջրով, ուժեղ քամին պոկում է տների տանիքները:

Չինաստանի իշխանությունները մոտ 100 հազար մարդ են ներգրավել տարերքի պատճառած վնասների վերացման աշխատանքներում: Իսկ Չինաստանի հարավում թայֆունն է մոլեգնում:

Վիսենթե թայֆունի հետեւանքով տուժել է մոտ կես միլիոն մարդ: Թայվան քաղաքում թայֆունը 3 մարդու կյանք է խլել, 6-ը համարվում են անհետ կորած:

Տարերքի հիմնական թիրախը դարձել է Գուանդուն մարզը: Մոտ 95 հազար մարդ է տարահանվել մարզի 9 ավաններ՝ քաղաքներից: Ուժեղ քամին վնասել է բազմաթիվ տներ, ճանապարհներ, մեծ վնաս է հասցվել հացահատիկային մշակաբույսերին:

Աղետի ընդհանուր տնտեսական վնասը կազմել է ավելի քան 28 միլիոն դոլար: Ըստ օդերեւութաբանների, թայֆունը կշարունակի իր ուղին արդեն դեպի երկրի հյուսիս-արեւմուտք՝ 15-20 կմ/ժամ արագությամբ:



Բեռնատարը առնվազն 13 մարդու կյանք է խլել

Բեռնատար մեքենայի վրաերթի հետեւանքով Հնդկաստանի հյուսիսում զոհվել է առնվազն 13 մարդ, այդ թվում՝ 11 կին: Պատահարը տեղի է ունեցել Հնդկաստանի հյուսիսային Ուտար-Պրադեշ նահանգում: Մարդկանց մի մեծ խումբ մայրուղու մոտ նստած սպասելիս է եղել ավտոբուսին, երբ բեռնատարը ողջ արագությամբ ընթացել է նրանց ուղղությամբ:

Նախնական տվյալներով՝ վարորդը կորցրել է մեքենայի վերահսկողությունը:

Անպառային հրդեհներ. 3 զոհ

Իսպանա-ֆրանսիական սահմանի մոտակայքում գտնվող Ժիրոնա քաղաքում բռնկված անտառային հրդեհների հետեւանքով զոհվել է 3 մարդ, սատկել է 500 ոչխար: Մարդկային զոհերի պատճառ է դարձել այն, որ քամին փոխել է հրդեհի ուղղությունը, եւ նրանք հայտնվել են հրդեհի օղակի մեջ: Իսպանիայի հյուսիս-արեւելքում հրդեհը դուրս է եկել վերահսկողությունից եւ ստիպել է հազարավոր մարդկանց ապաստարան փնտրել այլուր:

Ոչնչացվել է մոտ 7000 հա անտառային տարածք:

Կործանվել է ուղղաթիռ

Ֆրանսիայի հարավ-արեւելյան մասում ուղղաթիռ է վթարի ենթարկվել. զոհվել է 6 մարդ: Ողբերգությունը տեղի է ունեցել Վերդոն կիրճում, որտեղ ուղղաթիռը փորձնական թռիչք էր կատարում: Վթարի մոտակայքում մոտ 10 զբոսաշրջիկ է եղել, սակայն, բարեբախտաբար, նրանք չեն տուժել, միայն մեկ հոգի թեթեւ վնասվածքներ է ստացել: Փրկարարների համար չափազանց բարդ է մուտք գործել ուղղաթիռի կործանման վայր: Օգնության համար դեպքի վայր է մեկնել ալպինիստների խումբը:

Վթարի պատճառները ճշտվում են:



արագ արձագանքման ծառայություններ

<<< 2 տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Հրազդանի հիվանդանոց: Հիվանդանոցի ճանապարհին Ջ. Թորոսյանը մահացել է: Ըստ բժիշկների՝ Հ. Դովլաթյանի առողջական վիճակը ծանր է, իսկ Ա. Մկրտչյանինը՝ միջին ծանրության:

Մոլորվել էին Նորավանքի տարածքում

Հուլիսի 21-ին, ժամը 21.18-ին ահազանգ է ստացվել, որ Վայոց ձորի մարզում՝ Գնիշիկ-Նորավանք հատվածում մոլորվել է 17 հոգուց բաղկացած արշավախումբ, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր եւ մեկնել մարզային փրկարարական ջոկատն ու օպերատիվ խումբը:

Պարզվել է, որ արշավախումբը բաժանվել է 2 մասի, որի մի խումբը գտնվում է Նորավանքի եկեղեցուց մոտ 200 մետր, իսկ մյուսը՝ 400 մետր հեռավորության վրա:

Ժամը 01.00-ին դեպքի վայրից տեղեկացրել են, որ արշավախմբի բոլոր 17 անդամները գտնվել են եւ փրկարարների օգնությամբ տեղափոխել անվտանգ տարածք:

Արջը կենդանիներ է հոշոտել

Վայոց ձորի մարզի Ռինդ գյուղից տեղեկություն է ստացվել, որ հուլիսի 22-ին, ժամը 15.00-ի սահմաններում «Մոմիկսար» կոչվող հանդամասում արջը հոշոտել է Գ. Սաֆարյանին, Ա. Կյուրեղյանին եւ Կ. Խաչատրյանին պատկանող 3 զլուխ խոշոր եղջերավոր անասուն:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում գրանցվել է տարաբնույթ հրդեհների 75 դեպք, որոնց զերակշիռ մասը տեղի է ունեցել խոտածածկ տարածքներում:

Այրվող բնակարանից դուրս է բերվել 2 երեխա

Հուլիսի 22-ին, ժամը 12.59-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Իսակովի 52/4 շենքի 16-րդ բնակարանում:

Դեպքի վայր եւ մեկնել երկու մարտական հաշվարկ, ավտոսանդուղք, հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ, հրդեհաշիջման կազմակերպման բաժնի եւ ԳԿԿ օպերատիվ խմբերը՝ պարամեդիկով:

Հրշեջ-փրկարարների եւ փրկարարների ուժերով դուռը բացվել է, եւ բնակարանից դուրս են բերվել 2005 թ. ծնված Արսեն եւ 2008 թ. ծնված Արտյոմ Սարգսյանները, որոնք տեղափոխվել են «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն: Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը բավարար է:

Հրդեհը մարվել է ժամը 13.27-ին: Գ. Խնկոյանին պատկանող բնակարանի (վարձակալ՝ Ջոյա Կայրապետյան) խոհանոցում այրվել է էլեկտրական թեյնիկ, սեղան եւ հատակը՝ 1 ըմ մակերեսով:

Տուժածներ հրդեհից

Հուլիսի 23-ին, ժամը 10.48-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Դավիթաշեն վարչական շրջանի 1-ին թաղամասի թիվ 3 շենքի 22-րդ բնակարանում:

Դեպքի վայր եւ մեկնել մեկ մարտական հաշվարկ, մեկ ավտոսանդուղք եւ ԳԿԿ օպերատիվ խումբը՝ պարամեդիկներով: Հրդեհը մարվել է տեղի ուժերով: Այրվել է գազի 5 կգ-անոց բալոն, 1 ծածկոց եւ 1 վարագույր: 1957 թ. ծնված Վարդուհի Բալդանյանը եւ 1981 թ. ծնված Արմինե Սաֆարյանը հրդեհի հետեւանքով ստացել են վնասվածքներ ու տեղափոխվել «Ճառագայթաբանության բժշկության եւ այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ: Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը բավարար է:

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. հուլիսի 19-ից 25-ը ՍՊԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցել է 3 բալանոց երկրաշարժ, որը տեղի է ունեցել հուլիսի 23-ին Աշոց գյուղից 7 կմ հարավ-արեւելք:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է 5 երկրաշարժ: Հուլիսի 19-ին Թուրքիայի Հորասան քաղաքից 24 կմ հարավ-արեւելք գտնվող էպիկենտրոնով երկրաշարժի ուժգնությունն է 4 բալ: Հաջորդ օրը Ադրբեջան-Վրաստան սահմանային գոտում տեղի ունեցած 3-4 բալ ուժգնությամբ սեյսմիկ իրադարձության էպիկենտրոնը գտնվում է Ջաբաթալա քաղաքից 36 կմ հյուսիս-արեւմուտք, հուլիսի 23-ին հետեւել է 3 բալանոց եւս մեկ ստորգետնյա ցնցում: Հուլիսի 24-ին եւ 25-ին Թուրքիայում գրանցվել է 3 բալ ուժգնությամբ 2 երկրաշարժ, մեկը՝ Սա-

րալ քաղաքից 13 կմ հարավ-արեւելք, մյուսը՝ Գեւաշ քաղաքից 33 կմ հարավ-արեւմուտք:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է 3 ուժեղ երկրաշարժ, որոնք տեղի են ունեցել խաղաղօվկիանոսյան սեյսմաակտիվ գոտում (Հրե օղակ): Հուլիսի 20-ին Կուրիլյան կղզիների (Ռուսաստան) հատվածում գրանցվել է 6.0 մագնիտուդով երկրաշարժ: Այդ օրը Ինդոնեզիայի Սումատրա կղզու հյուսիսում տեղի է ունեցել սեյսմիկ իրադարձություն, որն ունեցել է 6.4 մագնիտուդ: Ստորգետնյա ցնցումներից տեղաբնակները խուճապի մատնված լքել են բնակարանները, զոհվել է 1 տարեց բնակիչ: Հուլիսի 25-ին Սողոմոնյան կղզիների մոտ գրանցված երկրաշարժի ուժը 6.5 մագնիտուդ է:

ԱԻՆ ՍՊԾ գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում հուլիսի 27-ին սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ, 28-ին՝ հյուսիսային շրջաններում, 29-ից 31-ը շրջանների զգալի մասում գիշերը եւ օրվա երկրորդ կեսին սպասվում է կարճատև անձրև եւ ամպրոպ, առանձին հատվածներում հնարավոր է կարկուտ: Քամին՝ հարավ-արեւելյան՝ 3-8մ/վրկ, ամպրոպի ժամանակ՝ քամու ուժգնացում՝ 18-23մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 29-ին եւ 30-ին կնվազի 4-6 աստիճանով:

Օդի ջերմաստիճանը հուլիսի 27-ին գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ +10...+15, Տավուշում՝ +15...+18, Լոռիում՝ +10...+15, Արագածոտնի նախալեռներում՝ +18...+21, Արարատյան դաշտում՝ +19...+23, Սյունիքի հովիտներում՝ +18...+22, Սյու-

նիքի նախալեռներում +10...+15, Արցախում՝ +18...+21 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը հուլիսի 20-ին ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ +26...+31, Տավուշում՝ +32...+37, Լոռիում՝ +30...+33, Արագածոտնի նախալեռներում՝ +33...+36, Արարատյան դաշտում՝ +35...+38, Սյունիքի հովիտներում՝ +35...+38, Սյունիքի նախալեռներում՝ +27...+30, Արցախում՝ +30...+35 աստիճանի սահմաններում:

Երեւանում հուլիսի 27-ին եւ 28-ին սպասվում է առանց տեղումների եղանակ, 29-ից 31-ը երեկոյան ժամերին հնարավոր է կարճատև անձրև եւ ամպրոպ:

Օդի ջերմաստիճանը հուլիսի 27-ին գիշերը կտատանվի +20...+22, ցերեկը՝ +36...+38 աստիճանի սահմաններում:



Արտակարգ իրավիճակներ ԼՂՀ-ում

Հուլիսի 23-25

Հրդեհ

Հուլիսի 23-ին հրդեհ է բռնկվել Ասկերանի շրջանի Վարդաձոր համայնքի տարածքում: Դեպքի վայր է մեկնել 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է մոտ 3 հա մակերեսով չոր խոտ:

Հուլիսի 23-ին հրդեհ է բռնկվել Ասկերանի շրջանի Աստղաշեն գյուղի բնակիչ Արթուր Ավագյանին պատկանող գոմում: Դեպքի վայր է մեկնել 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է գոմի տանիքը եւ մոտ 1 մեքենայի չափ չոր խոտ:

Հուլիսի 25-ին հրդեհ է բռնկվել Մարտակերտ քաղաքի Անդրանիկ փողոցի մոտակայքում: Դեպքի վայր է մեկնել 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է 5 էլեկտրահաշվիչ:

Ձեռք-զինամթերք

Հուլիսի 23-ին տեղեկություն է ստացվել, որ Մարտունու շրջանի Դուզե ճարտար համայնքի հարակից այգիների մոտակայքում հայտնաբերվել է զինամթերք: Դեպքի վայր մեկնած ՓԾ սակրավորները հայտնաբերված զինամթերքը (2 հատ նռնակաձեղնակալ արկեր պայթուցիչով) վնասագերծել են:

Հուլիսի 25-ին տեղեկություն է ստացվել, որ Ասկերանի շրջանի Խրամորթ համայնքի մոտակայքում հայտնաբերվել է զինամթերք: Դեպքի վայր մեկնած ՓԾ սակրավորները հայտնաբերված զինամթերքը («Նուրս» տիպի արկ) վնասագերծել են:

ԼՂՀ փրկարար ծառայության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՄԵԼԱՆՈՒՄԻ ՆԱԽԱԿԱՐԳ ԴԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ		
Հայտարարում է 2012-2013 ուս.տարվա ընդունելությունը հետեւյալ մասնագիտությունների գծով		
Մասնագիտություններ	Վարձը (հազ. դր.) առկա	Վարձը (հազ. դր.) հեռակա
Բակալավրիատ		
Հրդեհային պաշտպանություն	Անվճար	180 140*
Փրկարարական գործ	Անվճար	180 140*
Եզնաժամային կառավարում (մենեջմենթ)	260	200 160*
Քաղաքացիական պաշտպանություն	240	180 140*
Պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում (մանկավարժություն)	240	180 140*
Տրանսպորտային եւ հրշեջ փրկարար հատուկ տեխնիկայի շահագործում եւ սպասարկում	240	180 140*
Մագիստրատուրա		
Փրկարարական գործ	235	-
Եզնաժամային կառավարում (մենեջմենթ)	-	240 200*
Միջին մասնագիտական կրթական ծրագիր (քոլեջ)		
Հրդեհային պաշտպանություն	130 90**	-
Հրշեջ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում եւ շահագործում	130 90**	-
Մենեջմենթ (կառավարում արտակարգ իրավիճակներում)	90**	-

Ծանոթություն.

* Համակարգում աշխատողների համար
** Ուսուցումը Ստեփանավան քաղաքում

Ընդունելությունը

- Բակալավրիատում՝ Մաթեմատիկա (բանավոր),
- Հայոց լեզու (թելադրություն),
- Հայաստանի աշխարհագրություն (հարցազրույց):

- Մագիստրատուրայում՝ հարցազրույց:
- Միջին մասնագիտականում՝ հարցազրույց:

Տեղեկությունների համար զանգահարել՝
հեռ. 61-47-60, 61-19-21:
Հասցեն՝ Երեւան, Ավան, Աճառյան 1:



արտակարգ իրավիճակների նախարարություն...

Օգոստոս ամսվա կլիմայական բնութագիրը եւ ամսական կանխատեսումը

Հանրապետության տարածքում օգոստոսը երկրորդ շոգ ամիսն է, սակայն մի շարք շրջաններում՝ Գեղարքունիքի հյուսիսային մասում, Արագածոտնի նախալեռներում, բարձր լեռնային շրջաններում օգոստոսին ջերմաստիճանը փոքր ինչ բարձր է հուլիսյան ջերմաստիճանից:

Միջին ամսական ջերմաստիճանը հանրապետությունում 15... 16.7°C է, Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի մարզերում եւ Սյունիքի հովիտներում՝ 25...26°C: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանն այստեղ հասնում է 41...43.7°C (43.7°C՝ 2011թ. Մեղրի): Միջինը 25-26 օր ցերեկային ջերմաստիճանը լինում է 30°C-ից բարձր: Փոքր ինչ ցածր ջերմաստիճան է գրանցվում Տավուշում, Արագածոտնի նախալեռնային շրջաններում (միջինը՝ 18...21°C, առավելագույնը՝ 37...39°C): Հարմարավետ պայմաններ են դիտվում Լոռիում, լեռնային շրջաններում եւ Սյունիքի նախալեռներում (միջին ջերմաստիճանը՝ 15...18°C): Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը Գեղարքունիքում, Լոռիում, Շիրակում նվազել է մինչեւ -2...-3°C (1941թ.), այստեղ օգոստոսի երկրորդ տասնօրյակում միջին օրական ջերմաստիճանը իջնում է մինչեւ 15°C, որը նշանակում է ամռան ավարտ եւ աշնան սկիզբ: Արարատի, Արմավիրի մարզերում նվազագույն ջերմաստիճանը չի իջնում 8...11°C ցածր, մինչեւ ամառվա վերջը պահպանվում է շոգ եւ չոր եղանակը:

Օդի հարաբերական խոնավությունը հանրապետության տարածքում միջինը 70-75% է, այն բավական ցածր է Արարատի, Արմավիրի եւ Վայոց Ձորի մարզերում՝ 42-43%: Ինչպես եւ հուլիսին, կարող են դիտվել խորշակներ, որոնց հաճախակաճությունը ավելանում է՝ պայմանավորված խոնավության պակասորդի մեծացմամբ եւ քամու արագության ուժեղացմամբ:

Հանրապետության տարածքում օգոստոսին տեղումների քանակը միջինը կազմում է 34 մմ, այսինքն՝ տարեկան տեղումներ

րի 5%-ը: Տեղումները բաշխվում են շատ անհավասարաչափ: Առավելագույն քանակը դիտվում է Լոռիում, Տավուշում՝ 40-60 մմ, նվազագույնը՝ Արարատի, Արմավիրի մարզերում՝ 6-11 մմ:

Ամպրոպային գործունեությունը հանրապետության հյուսիսային կեսում հաճախակի է՝ միջինը 7-10 օր, առավելագույնը՝ 15-21 օր, մնացած շրջաններում որոշակիորեն պակասում է՝ միջինը 3-4 օր: Միայն 4-5 օր կարող է դիտվել կարկուտ:

Արարատի եւ Արմավիրի մարզեր, Արագածոտնի նախալեռներ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 24...26°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրերի հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչեւ 37...38°C, ամսվա երկրորդ կեսին՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ 15...17°C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ 12...13°C, միջին բացարձակ առավելագույնը՝ 37...39°C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ 6...11 մմ):

Շիրակի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզեր, Արագածոտնի մարզի լեռնային շրջաններ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 15...18°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչեւ 28...32°C, ամսվա երկրորդ կեսին՝ օդի ջերմաստիճանի նվազում, գիշերը մինչեւ 3...6°C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ 3...7°C, միջին բացարձակ առավելագույնը՝ 25...32°C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ, դրական շեղումով (նորման՝ 30...46 մմ):

Լոռու մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 16...19°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է



օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը մինչեւ 25...30°C, ամսվա երկրորդ կեսին օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ 4...8°C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ 3...7°C, միջին բացարձակ առավելագույնը՝ 27...30°C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ, դրական շեղումով:

Տավուշի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 18...22°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը մինչեւ 29...34°C, ամսվա երկրորդ կեսին՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ 5...10°C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ 8...12°C, միջին բացարձակ առավելագույնը՝ 30...32°C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ, դրական շեղումով:

Վայոց Ձորի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է հովտային շրջաններում 24...26°C, լեռնային շրջաններում՝ 17...19°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրերի հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը հովտային շրջաններում մինչեւ 35...36°C, լեռնային շրջաններում՝ 25...28°C, ամսվա երկրորդ կեսին օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը հովտային շրջաններում մինչեւ 13...16°C, լեռնային շրջաններում՝ 4...8°C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը

հովտային շրջաններում՝ 12...13°C, լեռնային շրջաններում՝ 5...6°C, միջին բացարձակ առավելագույնը՝ հովտային շրջաններում 35...38°C, լեռնային շրջաններում՝ 27...28°C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ հովտային շրջաններում 9...20 մմ, լեռնային շրջաններում 26...30 մմ):

Սյունիքի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է հովտային շրջաններում 23...26°C, լեռնային շրջաններում՝ 17...19°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրերի հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը հովտային շրջաններում մինչեւ՝ 35...36°C, լեռնային շրջաններում՝ 25...30°C, ամսվա երկրորդ կեսին օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը հովտային շրջաններում մինչեւ՝ 13...17°C, լեռնային շրջաններում՝ 5...8°C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ հովտային շրջաններում՝ 11...15°C, լեռնային շրջաններում՝ 5...8°C, միջին բացարձակ առավելագույնը՝ հովտային շրջաններում 35...37°C, լեռնային շրջաններում՝ 29...31°C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ հովտային շրջաններում 8...30 մմ, լեռնային շրջաններում 15...40 մմ):

Երեւան

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 24...25°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրերի հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչեւ 35...36°C, ամսվա երկրորդ կեսին՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ 13...15°C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ 13°C, միջին բացարձակ առավելագույնը՝ 37°C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ 8...10 մմ):

Լ. Վարդանյան

ՄԻՆ Հայպետհիդրոմետի տնօրեն

«Անտառային հրդեհների հակազդում» միջոցառման արդյունքների վերաբերյալ

ման, հրդեհաշիջման եւ դրանց հետեւանքների վերացման գործում, ինչպես նաեւ ստուգել մարզի փրկարարական վարչության եւ անտառտնտեսությունների կողմից մշակված եւ մարզպետի կողմից հաստատված «Անտառների հակահրդեհային պահպանության միջոցառումներ» ծրագրի համապատասխանությունը ստեղծված իրավիճակին:

Ուսումնավարժանքը վարում էին Կոտայքի մարզի փոխմարզպետ Ա. Դազարյանը եւ տնօրենի խորհրդական Վ. Ավետյանը: Քննարկելով հրդեհավտանգ տարածքների, հրդեհների եւ հրդեհաշիջման աշխատանքների վերաբերյալ հարցերը՝ նշվեց.

- անտառամիջյան ճանապարհներն ամանցանելի են: Անհրաժեշտ է մաքրել դրանք՝ հրդեհների հնարավոր օջախներին տրանսպորտային միջոցների մոտեցումն ապահովելու համար,
- անտառներում անհրաժեշտ է իրականացնել սանիտարական մաքրումներ, քանի որ հիվանդացած, չորացած ծառերն ավելի հրդեհավտանգ են,
- անտառտնտեսություններին անհրաժեշտ են ամենազմաց փոխադրամիջոցներ՝ համապատասխան սարքավորումներով՝ հրդեհների օջախները կարճ ժամանակամիջոցում մարելու համար,
- սանիտարական հատումների միջոցով կանխարգելել հնարավոր հրդեհների տարածումը,
- հանգստյան գոտիներում տեղադրել հսկողության ցուցանակներ, պաստառներ

եւ իրականացնել բացատրական աշխատանքներ:

Արզակյանի գյուղապետ Ն. Մովսիսյանն իր ելույթում նշեց, որ հրդեհի դեպքում ժողովուրդն առաջինն է օգնության ձեռք մեկնում, եւ նրանց անհրաժեշտ է խրախուսել: Բուժականի գյուղապետ Կ. Գալստյանի կողմից առաջարկություն եղավ հարակից տարածքների գյուղացիներին խրախուսելու նպատակով նրանց տրամադրել անտառամերձ տարածքներից խոտ եւ չորացած ճյուղեր:

Ծաղկածորի քաղաքապետ Գ. Միրզոյանը նշեց, որ իրենք ունեն ոչ միայն ցուցանակներ, պաստառներ, այլեւ կան անտառապահներ, ովքեր հանգստացող քաղաքացիների հետ բացատրական աշխատանքներ են տանում: Անհրաժեշտ է, որ նման աշխատանքներ իրականացվեն նաեւ մնացած անտառտնտեսություններում:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառների պահպանության եւ պաշտպանության բաժնի պետ Ա. Մանասերյանն իր ելույթում նշեց, որ անտառային հրդեհների առաջացման հիմնական պատճառը համայնքային հողերի բուսածածկի մնացորդների իրկիզումն է: Նա առաջարկեց, որ համայնքների ղեկավարները՝ անտառներին հարակից համայնքային հողերի բուսածածկույթի մնացորդների իրկիզումից զերծ մնալու նպատակով ազգաբնակչության շրջանում բացատրական աշխատանքներ տանեն՝ միաժամանակ տեղեկացնելով ազգաբնակչությանն անտառային տարածքների հրդեհների պատճառած վնասի հատուցման չափազանց բարձր սակագ


ների, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվության ենթարկման մասին: Նա նաեւ իր ելույթում տեղեկացրեց այն մեծածավալ վնասների մասին, որ կրում են անտառային տարածքները հանրապետության մասշտաբով: Անդրադառնալով անտառտնտեսություններում ֆինանսական ներդրումների անհրաժեշտության հարցին՝ Ա. Մանասերյանը պարզաբանեց, որ նման ներդրումներն անհնար են ֆինանսավորման բացակայության պատճառով: Նա նշեց նաեւ, որ անտառամերձ համայնքների ղեկավարները պարտավոր են կատարել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2011 թ. հոկտեմբերի 3-ի փոփոխությունը, այն է՝ «Արգելվում է այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արտավայրերի ու խոտհարքերի բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում»:

Հանդիպման ընթացքում նաեւ անդրադարձ եղավ անտառտնտեսություններում շարժական հրշեջ կազմավորումների ստեղծմանը, նրանց տեխնիկական հանդերձանը եւ ուսուցմանը, անտառների պահպանության ազգային ծրագրի մշակմանը, օրենսդրական դաշտի արդիականացմանը:

Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետի տեղակալ Մ. Վարդանյանը հայտնեց ոստիկանության աշխատակիցների կողմից բնակչության հետ կազմակերպվող հանդիպումների եւ տարվող բացատրական աշխատանքների մասին:

Գ.Ղամարյան

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության առաջին բաժնի պետ



միջազգային

Էմիլիայի երկրաշարժը խթանում է համագործակցությունը ռիսկի ուսումնասիրման ոլորտում

Ռուի Պինո, ԵՄԳ հիմնադրամի գլխավոր քարտուղար

Իսկապես ստորագուցիչ է, թե որքան հեշտ է մեզ հիմարացնում բնությունը, բայց մենք էլ կարող ենք ավելի ջանասիրաբար ուսումնասիրել երկրաշարժերի առաջացրած ավերները: Մենք միշտ մտածել ենք, որ երկրաշարժի ուժգնությունը պայմանավորված է տեղաշարժվող սալերի տարիքով ու արագությամբ, բայց Մեծ արեւելյան ճապոնական երկրաշարժն ընդմիշտ վերջ դրեց այդ տեսակետին:

Իտալիայում՝ Էմիլիա-Ռոմանիայում մայիսին տեղի ունեցած երկրաշարժն ու հետցնցումներն այլ բնութիւն ունեին, բայց դրանք նույնպես մեզ հուշում են, որ սեյսմիկ ռիսկի գնահատման ոլորտում հաջողության հասնելու եւ հանրությանը երկրաշարժերին ավելի պատրաստված դարձնելու համար մենք պետք է աշխատենք ու սովորենք միասին:

Էմիլիայի երկրաշարժն ու հետցնցումները, ինչպես նաեւ վերջին մյուս ցնցումները, օրինակ՝ Նոր Մեքսիկայում կամ ԱՄՆ-ի կենտրոնում, մեզ հիշեցնում են, որ աշխարհում շատ քիչ տարածքներ կան, որոնք անվտանգ են սեյսմիկ տեսանկյունից: Մենք նաեւ տեսանք, որ միջին ուժգնության երկրաշարժերը կարող են ավերածություններ եւ լուրջ վնաս հասցնել, երբ հարվածում են խոցելի տարածքներին, այնտեղ, որտեղ շատ մարդիկ են ապրում, եւ որտեղ շինությունները, կարեւոր ենթա-

կառուցվածքները կամ տնտեսական ռեսուրսները խաբխուլ են:

Հարցն այն է, թե ինչպես հետեւություններ անենք այս իրադարձություններից եւ դրանց տված դասերից՝ համոզվելու համար, որ դրանք իրենց ներդրումն ունեցան երկրաշարժերի վերաբերյալ մեր գիտելիքների ավելացման եւ ապագա երկրաշարժերի ռիսկը գնահատելու մեր ունակության մեջ:

Ամեն մի երկիր երկրաշարժերի վտանգն ու ռիսկը վերլուծելու իր մոտեցումն ունի, եւ որոշ երկրներ սեփական մոդելը կառուցելու ռեսուրսներ, գործիքներ ու անցկացված գիտափորձերի հարուստ բազա ունեն, բայց դրանցից ոչ մեկը չի կարող ստուգվել 50 տարուց քիչ ժամանակահատվածում, քչերը կարող են համեմատվել իրար հետ, եւ բոլորն էլ տառապում են տվյալների անլիարժեքությունից: Եթե մենք ուզում ենք վերջին իրադարձություններից քաղել ամեն ինչ եւ բարելավել մեր մոդելներն ու տվյալների բազան, մենք դա չենք կարող անել մեկուսացած:

Մենք աշխարհի բոլոր շահառուների համար բաց գործիքների ստեղծման կարիք ունենք՝ ռիսկի սահմանման ու բացահայտման համար: Մենք միջազգային երկաթուղային կարիք ունենք՝ քննարկելու եւ ուսումնասիրելու ռիսկի գնահատման վերաբերյալ գաղափարներն ու մոտեցումները: Մենք աշխարհով մեկ տվյալների փոխանակման ոլորտում համագործակցության կարիք ունենք, եւ այդ կերպ մենք



կկարողանանք համատեղ ու թափանցիկ կերպով բոլորի փորձը ներառող գլոբալ մոդելներ կառուցել, միասին ստուգել դրանք, եւ համոզվել, որ ամեն մեկն էլ կարող է օգտվել դրանցից եւ սովորել դրանց օգնությամբ:

Ամբողջ աշխարհում տարբեր ջանքեր են գործադրվում այդ կարիքները բավարարելու համար, եւ ԵՄԳ-ն՝ երկրաշարժի մոդելավորման գլոբալ նախաձեռնությունը (GEM. Global Earthquake Model initiative) դրանցից մեկն է:

ԵՄԳ-ի նպատակն է հանդես գալ որպես բաց նախաձեռնություն, որն աջակցում է երկրաշարժերի ռիսկի գնահատման ոլորտում համաշխարհային համագործակցությանը: ԵՄԳ-ի շրջանակներում փորձագետները գլոբալ եւ տեղական մակարդակով, համատեղ մշակում են գործիքներ ու ռեսուրսներ կառավարական ինստիտուտների, տեղական եւ միջազգային կազմա-

կերպությունների եւ կորպորացիաների, գիտնականների ու անհատների համար, որպեսզի բացահայտվի, գնահատվի եւ հասկացվի երկրաշարժերի ռիսկը: Դա կօգնի նրանց առավել հաջողությամբ նվազեցնել այն ռիսկերը, որոնց հետ գործ ունեն: Աշխարհով մեկ կազմակերպությունների ու նախաձեռնությունների հետ համագործակցելով՝ մենք մեր համատեղ ներդրումն ենք ունենում ավելի աղետակայուն հասարակություն ունենալու գործում:

Էմիլիայի երկրաշարժի համար վերջերս ձեւավորված «իմֆորմացիոն-վերլուծական» կենտրոնը միջազգային այդպիսի համագործակցության պտուղն է:

Վերահսկվելով EUCENTRE-ի (Երկրաշարժի մոդելավորման ոլորտում դասընթացների ու հետազոտությունների եվրոպական կենտրոն) եւ EERI-ի (Երկրաշարժի մոդելավորման հետազոտությունների ինստիտուտ) կողմից, այն հնարավորություն է տալիս աշխարհի տարբեր փորձագետների տվյալներ փոխանակել (լուսանկարներ, դիտարկումներ, հղումներ) իրադարձությունների հետեւանքների վերաբերյալ եւ տեղեկատվության կարելու աղբյուր է ապագա ռիսկերի գնահատման համար:

Երկրաշարժերին առավել պատրաստված լինելու համար մենք ավելին կարող ենք եւ պետք է անենք միասին:

UNISDR

Ստամբուլում մի ոտքդ ամուր դնում ես Եվրոպայում, իսկ մյուսը՝ Ասիական մայրցամաքում՝ Բոսֆորի նեղուցի առավելությունն է, որը Թուրքիայի ամենամեծ քաղաքը բաժանում է երկու մասի:

Բոսֆորի համալսարանի Կանդիլի մասնաշենքն աղմկոտ 13.5 միլիոնանոց քաղաքի Ասիական հատվածում մի բլրի վրա է: Այս մասնաշենքում է մեծ հարգանք վայելող երկրաշարժերի ուսումնասիրման ինստիտուտը:

Ինստիտուտի մշտադիտարկման սենյակը մոտավորապես դպրոցական դասարանի չափ է: Քառք-քառք գծերը, որոնք վերել ու ներքեւ են շարժվում համակարգչի լայն էկրանին, ցույց են տալիս սեյսմիկ ակտիվությունը, որը գրանցվում է Թուրքիայի տարածքում տեղակայված ավելի քան 100 դիտակայաններից եւ ամմիջական հարելանքներից:

Ինստիտուտը կարող է հաշվարկել նաեւ երկրաշարժի հետեւանքները:

«Դա օգնում է մեզ արագ գնահատել վնասների չափերը եւ հաշվարկել, թե ինչ բնույթի արձագանք է անհրաժեշտ», - ասում է ինստիտուտի տնօրեն Մուստաֆա Երդիլը:

Թուրքիայում հաճախ են 7 մագնիտուդին մոտ երկրաշարժեր տեղի ունենում:

Ինստիտուտի մշտադիտարկման սենյակն աշխատում է շուրջօրյա: Երբ երկրաշարժ է տեղի ունենում, այն գնահատում է աղբյուրն ու մասշտաբները՝ մինչեւ մամրամաները հայտարարելն ու կառավարությանն ու քաղաքային իշխանություններին իրազեկելը:

Դոգան Քալաֆաթը, որն աշխատում է այստեղ, հերթականությամբ թվարկում է այն տարիքվերը, երբ ուժեղ երկրաշարժեր են տեղի ունեցել՝ 1939, 42, 43, 44, 57, 67, 98, 99 ...:

Ամեն տարվա հետ նա քարտեզի վրա ցույց է տալիս դրանց տեղը: Դրանք բոլորն էլ տեղի են ունեցել Զյուսիսային անատոլիական իջվացքի վրա, որը կտրում-անցնում է հյուսիսային Թուրքիան՝ արեւելքից արեւմուտք:

Թուրքիան պատրաստվում է անխուսափելի հզոր երկրաշարժին

Շատերն են վստահ, որ հաջորդ մեծ երկրաշարժը հարվածելու է Ստամբուլին: Քալաֆաթի կանխատեսումների համաձայն 75 տոկոս հավանականություն կա, որ 7 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժ տեղի կունենա 40 տարվա ընթացքում:

Այսինքն՝ ինստիտուտը կփորձի՝ կանխատեսել ցնցումը, երբ դրա հավանականությունը շատ մոտ լինի:

Քալաֆաթը կտրուկ պատասխան է տալիս. «Դա իրականում այնքան էլ արդյունավետ չի լինի»:

Ինստիտուտը փորձարկել է երկրաշարժերի կանխատեսումը 1980-ականներին եւ 90-ականներին, երբ դիտարկման սարքավորումներ է տեղադրել Զյուսիսանատոլիական իջվացքի վրա:

Սակայն չի հաջողվել կանխատեսել 1999 թվականի երկրաշարժը, որը 17 000 կյանք խլեց: Դրանից հետո ցնցումների կանխագուշակման գաղափարին սկսեցին հոռետեսորեն վերաբերվել եւ մի կողմ թողեցին... մինչեւ այս տարվա մայիսը, երբ փորձագետը հեռուստատեսությամբ հայտարարեց, որ Ստամբուլին մի քանի տարվա ընթացքում ուժեղ երկրաշարժի իրական վտանգ է սպառնում:

Ոմանք ասում են, որ հանրությունը պետք է զգուշացված լինի նման վատթարագույն սցենարների մասին, բայց Չանկայա համալսարանի պրոֆեսոր Զ. Փլատ Գուլկանը, որը երկրաշարժերի մոդելավորման միջազգային ասոցիացիայի նախագահն է, համաձայն չէ:

«Ներկայիս գիտելիքներով մենք չենք կարող կանխագուշակել երկրաշարժերը», - ասում է նա: «Գիտնականները պետք է հետեւեն էթիկայի կանոններին, որպեսզի խուսափեն խուճապ տարածելուց»:

Թուրքական կառավարությունն այժմ էթիկայի ուղեցույց է պատրաստում, որտեղ ներկայացվում է, թե ինչպես պետք է գիտնականները երկրաշարժի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրեն հանրությանը:

Դեմիր Աքինը, վարչապետին կից՝ Աղետների եւ արտակարգ իրավիճակների վարչության Երկրաշարժի ռիսկի կառավարման խմբի նախագահը, այս հարցի կապակցությամբ հետեւյալ կարծիքն ունի.

«Չետազոտողներն սկզբում պետք է իրենց մեջ քննարկեն, թե որքանով է արժանահավատ տվյալ տեղեկատվությունը: Երբ դրա վստահելիությունը հաստատվի, նոր միայն տվյալները կարող են ներկայացվել հանրությանը»:

Եւ հետո ասելուսն ձնահյուսի պես աճում է, երբ խոսք է տարածվում, օրինակ, որ երկրաշարժն անխուսափելի է, քանի որ մրջյունների բանակները զանգվածաբար փախչում են որոշակի տարածքից:

«Եթե դու բավական ժամանակ ունես անհանգստանալու այս նախաձեռնությունից, ավելի լավ կլինի այն օգտագործես ուսումնասիրելու համար, թե ինչպես ինքը քեզ պաշտպանես երկրաշարժից», - ասում է Սուհեյլա Սեզանը՝ Թուրքիայի երկրաշարժի հիմնադրամից:

Հիմնադրամն այցելում է դպրոցներ՝ երկրաշարժի սիմուլյատոր-վագոնի ուղեկցությամբ: Դրա նպատակն է երեխաներին սովորեցնել, թե ինչպես պետք է վարվեն, երբ աղետը տեղի ունենա, օրինակ՝ թաքնվեն սեղանի տակ կամ հեռու մնան գրադարակներից, որոնք կարող են շրջվել:

Ստամբուլի Ջեթիմբուրնու թաղամասում հաջորդ ուժեղ ցնցման վնասները նվազեցնելու ծրագիր է իրականացվում:

Այստեղ շատ հին շենքեր կան, որոնք ունակ չեն դիմակայելու ուժեղ երկրաշարժի:

Իշխանությունները 8 տարի առաջ են մի արշավ սկսել, որի նպատակն է քանդել այս շինությունները եւ բնակիչներին տեղավորել նորակառույցներում:

Սկզբում այդ գործողությունները տեղաբնակների կողմից ուժեղ դիմադրության հանդիպեցին: Սակայն ամեն ինչ փոխվեց անցյալ տարվա հոկտեմբերին երկրի արեւելքում 7.1 մագնիտուդով երկրաշար-

ժից հետո: 480 բնակիչ համաձայնեց տեղափոխվել:

«Նոր շենքերը սեյսմակայուն են: Մարդկանց կյանքի որակը կբարձրանա», - ասում է քաղաքապետարանի ծրագրում ներգրավված ներկայացուցիչ դոկտոր Ալփասլան Չենդի Կուզուբոզլուն:

Ստամբուլում նաեւ շատ հին շենքեր կան, որոնք կառուցված են քարից կամ կարմիր աղյուսից: Մոտ 60 000 տուն կքանդվի եւ 63 000 մարդ կգոհվի 7.5 մգնիտուդ երկրաշարժի դեպքում՝ համաձայն քաղաքային իշխանությունների եւ ճարտնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) համատեղ ուսումնասիրության:

2003 թվականին Ստամբուլում սկսեց իրագործվել «Երկրաշարժի ռազմավարությունը»՝ աղետների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու համար: Տեղափոխման ծրագիրն այս ռազմավարության մի մասն է:

Նույնաման ծրագրեր նախատեսվում է իրականացնել ամբողջ երկրում: Այս տարի թուրքական կառավարությունն ընդունել է «Երկրաշարժին դիմակայելու ազգային ռազմավարությունը եւ գործողությունների ծրագիրը» մինչեւ 2023 թվականը:

Այն շատ ոլորտներ է ներառում՝ երկրաշարժի կանխատեսումից եւ աղետներին պատրաստվելու կրթությունից մինչեւ շենքերի սեյսմակայունության բարելավում:

Էթիկայի նշված ուղեցույցը նույնպես այդ պլանի մասն է:

Մեկ բան հստակ է: Երկրաշարժն անկասկած տեղի է ունենալու: Կանխատեսելը, թե հատկապես երբ, ծայրահեղ դժվար է: Դրա համար էլ հնարավոր ամեն ինչ պետք է արվի անխուսափելի աղետին պատրաստվելու համար: Սեյսմիկ ակտիվ գոտում գտնվող Թուրքիայում այսպիսի մտածողությունն արագ է տարածվում:

Ասահի Շիմբուն, ճապոնիա >>> 8

Վերլուծություն

XXI դար. մարտահրավերներ

Մարդկությունը ոտք դրեց երրորդ հազարամյակ: Սահմանագծային ժամանակն առիթ է տալիս անցած իրադարձությունների իմաստավորման, ապագայի կանխատեսման, միտումների ու հեռանկարների վերլուծության ու վերհանման: Այս աշխատության դիտարկման առարկան է ապագա սպառնալիքներն ու ոչ հեռու ապագայում մարդկային հանրության գոյության անվտանգության հիմքերը:

Սկիզբը՝ նախորդ համարներում

Յացն ու ջուրը՝ թագավոր

Գլոբալ հիմնախնդիրների մեջ, որոնց հետ մարդկությունը մտավ 21-րդ դար, ամենասուրն ու ամենազգալիս պարենով ապահովվածության խնդիրն է, որպես յուրաքանչյուր կենսաբանական տեսակի կյանքի հիմք: Իր հերթին այդ հիմնախնդիրը երկու կողմ ունի. ժողովրդագրական, որը կապված է երկրագնդի բնակչության գործնականորեն անվերահսկելի աճի հետ, եւ պաշարային. սա պարենային մթերքների արտադրության հնարավորություններն են:

Երբ մենք խոսում ենք սննդի կամ սնվելու մասին, մենք առաջին հերթին նկատի ենք ունենում հացը: Ահա թե ինչու, ամոտեսելով սննդատեսակների հսկայական բազմազանությունը եւ դրանց արտադրության բավական մեծ ծավալները, մարդն առանձին ուշադրություն է դարձնում հացի՝ որպես անփոխարինելի մթերքի հիմնախնդիրներին: Հենց հացի խնդիրն էլ 21-րդ դարում մարդկության գլոբալ պարենային խնդիրների միջուկն է կազմում:

Մարդկության պատմության ամբողջ ընթացքում սննդամթերքի արտադրությունը, որպես կանոն, չի հասել բնակչության ընդհանուր աճի հետեւից: Միայն 20-րդ դարի երկրորդ կեսին հացահատիկային կուլտուրաների համաշխարհային արտադրությունը եւ պարենային իրադրության գլխավոր ցուցիչն իր տեմպերով սկսեց առաջ անցնել բնակչության աճից: 1950-1990 թթ. ընթացքում բնակչությունը կրկնապատկվել է, իսկ հացահատիկային մշակաբույսերի համաշխարհային բերքահավաքն ավելացել է երեք անգամ:

Սակայն անցյալ դարի 80-ականների վերջին եւ 90-ականների սկզբին սննդամթերքի համաշխարհային արտադրության աճն սկսեց դանդաղել, թեեւ դրանց պահանջարկը շարունակում էր արագորեն աճել: Վերջինս կապված էր ոչ միայն Մոլորակի բնակչության ընդհանուր քանակի ավելացման, այլեւ այնպիսի նոր գործոնի հետ, ինչպիսին էր զարգացող երկրների լայն արդյունաբերականացման հետեւանքով մարդկանց մեծ զանգվածի բարեկեցության բարձրացումը՝ առաջին հերթին Ասիայում:

Իսկ ի՞նչ կարելի է սպասել 21-րդ դարի կեսերին, երբ, ըստ կանխատեսումների, երկրագնդի վրա կբնակվի 10-12 միլիարդ մարդ: Կարո՞ղ է մարդկությունը կերակրել ինքն իրեն 21-րդ դարում, թե դատապարտված է մահվան՝ սովի պատճառով: Կարելի է վստահաբար արձանագրել, որ այդ կոշտ հարցին հստակ պատասխան պարզապես գոյություն չունի:

Սննդամթերքի բավարար քանակության մը Մոլորակի բնակչությանն ապահովելուն կազդեն երկու գործոն:

Առաջինը բնակչության քանակի աճի տեմպերի նվազումն է. մի կողմից՝ պարզապես մեկ այս, մեկ այն տարածաշրջանում ծագող սովի եւ սննդամթերքի քրոնիկական անբավարարության պատճառով, ինչն անխուսափելիորեն հանգեցնում է հիվանդությունների տարածման, մահացությունների աճի, մարդկության վերարտադրողական հնարավորությունների նվազ-

ման: Մյուս կողմից էլ՝ չինական օրինակով ընտանիքի պլանավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, այսինքն՝ ծնելիության սահմանափակման հետեւանքով:

Երկրորդը համաշխարհային գյուղատնտեսության արտադրողականության նշանակալի բարձրացումն է, գյուղատնտեսական շրջանառության մեջ նոր հողերի ներմուծումը, առաջին հերթին հացահատիկային կուլտուրաների բերքատվության անընդհատական աճի ապահովումը: Այս ճանապարհի յուրաքանչյուր բաղադրամասի մեջ կան դեռեւս չօգտագործված պաշարներ, երբեմն՝ բավականաչափ նշանակալի:

Ապագայի հանդեպ տագնապալի զգացումները նշանակալիորեն արտահայտվում են նաեւ կյանքի կարելորագույն աղբյուրներից մեկի՝ **մաքուր ջրի** հիմնախնդրին ուղղված՝ մարդկության հայացքների փոփոխությունը: Ջրի բացառիկ որակները նրան դարձնում են կենդանի եւ ոչ կենդանի բնության անփոխարինելի բաղադրամասը, ջուրը կարելորագույն գործոններից մեկն է համարվում այն միջավայրի, որից կախված է մարդու կյանքն ու առողջությունը: Մարդկային օրգանիզմը ջրից զրկելն ավելի վտանգավոր է, քան սննդից զրկելը: Եթե առանց սննդի մարդը կարող է ապրել ամսից ավելի, ապա առանց ջրի՝ ընդամենը մի քանի օր (առանց օդի՝ մի քանի րոպե):

Ինչպիսի՞ն են Մոլորակի ջրապաշարային հնարավորությունները եւ մարդկության՝ 21-րդ դարում ջրի՝ հատկապես խմելու ջրի, անբավարարության պայմաններում հայտնվելու հնարավորությունները:

Ջուրն ամենուր է եւ միշտ ներկա է մեր շրջապատում՝ գազ, հեղուկ, պինդ եւ համակցված կերպերով: Առանձնահատուկ նշանակություն ունեն ջրի համակարգված, տարածականորեն տեղայնացված եւ բավական կայուն կուտակումները, որոնք կոչվում են ջրային օբյեկտներ կամ ջրապաշարային համակարգեր. դրանք ջրոլորտի տարրերի հիմնական կազմակերպիչներն են: Դրանց հիմնական դասերն են օվկիանոսներն ու ծովերը, գետերը, լճերը, ստորերկրյա ջրերը, ճահիճները, սառցաշերտերը, ջրամբարներն ու ջրանցքները:

Ջրային օբյեկտների թվարկումը միայն մարդկանց մտքերում պատկերացում է ծնունդ երկրագնդում ջրի հսկայական քանակության մասին, իսկ էկոլոգների դատողությունները, որոնք վերաբերում են երկրի բնակչությանը «մաքուր ջրով» ապահովելու խնդրում առկա տագնապալի երեւույթներին, հաճախ ընկալվում են որպես կեղծիք, որն արժանի չէ լուրջ վերաբերմունքի: Մինչդեռ տագնապելու լուրջ հիմքեր իսկապես գոյություն ունեն:

Մինչեւ վերջին ժամանակներս տիրում էր այն կարծիքը, որ ջրային պաշարները գործնականորեն անսպառ են: Իրականում դա այդպես չէ:

2003 թվականը ՄԱԿ-ը հայտարարեց քաղցրահամ ջրի տարի: Այդ փաստն արտահայտում է մասնագետների տագնապն այն առիթով, որ ջրի սպառման այսօրվա տեմպերի պահպանման դեպքում Մոլորակի բնակչությանն այն չի բավականացնի:

Ի դեպ

ՄԱԿ-ի սվյալներով՝ Երկրագնդի վրա մոտ 1,5 միլիարդ մարդ «մաքուր ջուր» օգտագործելու հնարավորություն չունեն: Ամեն օրի շուրջ 3 միլիոն մարդ մեռնում է հիվանդություններից, որոնց առաջացման դասճարք կեղտոտ ջուրն է (խուլեռա, շիֆ, դիզենտերիա):

Ջրամասակարարման հիմնախնդրի լուծման կտրուկ ուղիներից մեկը կարող է դառնալ ծովի ջրի օգտագործումը՝ քաղցրահամ դարձնելու ճանապարհով:



Ստեղծված պայմաններում մարդկությունը չի կարող հանգիստ սպասել այն ժամանակներին, երբ մաքուր ջրի մի բաժակը կդառնա անհասանելի երազանք: Արդեն այսօր մարդը պիտի լինի ծայրահեղերեն մտահոգ այսպիսի հարցերով. ինչպե՞ս թեքել բնությունը քայքայող զարգացման ուղեծիրը, նորմալացնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, գլխավոր նպատակ դարձնել մարդկության՝ որպես տեսակի պահպանման խնդիրը:

Շատ գիտնականների կարծիքով՝ նպատակը, որը հապատասխանում է մարդկության ընդհանուր շահերին, ոչ թե երկրացիների՝ շատացող ու շատացող միլիարդների աղքատիկ սննդի ու վտանգներով լի գոյության անընդհատական ապահովումն է, այլ այնպիսի մեխանիզմի ստեղծումը, որը կպահպաներ հավասարակշռությունը թվաքանակով կայուն մարդկության ու երկրի սահմանափակ պաշարների միջեւ:

Եթե այդպիսի մեխանիզմ չստեղծվի, երկրային քաղաքակրթությունը կարող է եւ չգոյատևել 21-րդ դարում: Եւ ոչ վերջին դերն այդ չարագույժ ավարտի մեջ կարող է խաղալ խմելու ջրի եթե ոչ ամբողջական բացակայությունը, ապա՝ էական անբավարարությունը, վստահաբար:

Վրանգավոր ժողովրդագրություն

1994 թվականին Կահիրեի (Եգիպտոս)՝ ազգաբնակչությունների ու զարգացման հարցերին նվիրված Միջազգային կոնֆերանսն ընդունեց ազգաբնակչության, երկրների զարգացման ու շրջակա միջավայրի գլոբալ փոխկապվածությունը: Այդ փոխկապվածությունը գլոբալ վտանգների աղբյուր է, քանի որ բնակչության աճի բարձր տեմպերը, ինչը բնորոշ է մի շարք զարգացող երկրների, հակասության մեջ են մտնում այդ երկրների տնտեսության զարգացման եւ բնական միջավայրի վիճակի հետ: Դեռեւս երբեք աշխարհի բնակչությունն այդքան արագ չի աճել, ինչպես 20-րդ դարի երկրորդ կեսին: Այդ իսկ պատճառով էլ ամենազգլխավորներից մեկը համարվող գլոբալ ժողովրդագրական հիմնախնդիրը բոլոր մյուս գլոբալ հիմնախնդիրների նախապատճառն է հանդիսանում, նրանց իմպերատիվը: Նրա առաջին բաղադրիչն ազգաբնակչության ինտենսիվ, անվերահսկելի աճն է:

Առաջին հազարամյակի, ինչպես նաեւ երկրորդի մեծ մասի ընթացքում, մարդկանց թվաքանակը երկրագնդի վրա շատ դանդաղ էր աճում: Այդ աճն արգելակվում էր պարենմթերքի անբավարարությամբ, բժշկական օգնության բացակայությամբ,

համաճարակներով, պատերազմներով, կյանքի դաժան պայմաններով: 18-րդ դարում ազգաբնակչության աճն զգալիորեն ուժգնացավ: 20-րդ դարի կեսին սկսվեց այսպես կոչված «ժողովրդագրական պայթյունը», այսինքն՝ բնակչության աճի սրընթաց արագացումը:

Ծնելիությունը, մահացությունը, բնակչության բնական աճը հիմնականում կենսաբանական գործընթացներ են: Բայց, այդուհանդերձ, դրանց վրա որոշիչ ազդեցություն են գործում մարդկանց կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները, ինչպես նաեւ նրանց փոխհարաբերությունները հասարակության մեջ եւ ընտանիքում: Սահացության մակարդակը նախ եւ առաջ կախված է մարդկանց կյանքի նյութական պայմաններից. սննդից, աշխատանքի ու կենցաղի սանիտարահիգիենիկ պայմաններից, առողջապահության զարգացումից:

Ծնելիության մակարդակը նույնպես կախված է հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքից, մարդկանց կյանքի պայմաններից: Բայց այդ կախվածությունը շատ ավելի բարդ է: Որպես կանոն, բարեկեցության ու կուլտուրայի աճի, կյանքի՝ արտադրական ու հասարակական գործունեության մեջ ավելի մեծ ընդգրկվածության, երեխաների ուսումնառության ժամկետների ավելացման ու «երեխայի արժեքի» համընդհանուր բարձրացման հետ մեկտեղ ծնելիությունը նվազում է: Բայց միաժամանակ եկամուտների աճը կարող է խթանել ծնելիությունը:

Աշխարհի տարբեր տարածաշրջաններում բնակչությունն աճում է ոչ միակերպ: Դա բացատրվում է վերարտադրողական բնույթների տարբերությամբ: Ամենապարզեցված տեսքով կարելի է խոսել բնակչության վերարտադրության երկու տիպերի մասին:

Առաջին տիպին բնորոշ են ծնելիության, մահացության եւ, համապատասխանաբար, բնակչության բնական աճի ոչ բարձր ցուցանիշները: Դա տարածում է գտել տնտեսապես զարգացած երկրներում, որտեղ անընդհատ աճում է տարեցների ու ծերերի բաժինը: Դա արդեն ինքնին նվազեցնում է ծնելիության ցուցանիշը եւ մեծացնում՝ մահացության ցուցանիշը: Անցյալ դարի ութսունական թվականներին կայունացան աճի տեմպերը զարգացած երկրներում, բայց մի քանի եվրոպական պետություններում նկատվեց նույնիսկ բնակչության բնական անկում (Ավստրիա, Յունգարիա, Գերմանիա, Դանիա, Շվեդիա), երբ մահացածների թիվն ավելի մեծ էր, քան ծնվածներինը: Չարգացած արդյունաբերություն ունեցող երկրներում (չնչին բացառությամբ) շատ ընտանիքներ մեկ երեխա ունեն, ինչը ցածր է այն մակարդակից, որն անհրաժեշտ է պարզ վերարտադրության համար: Սակայն եվրոպական երկրների մեծ մասում դեռեւս պահպանվում է բնակչության (թեպետ սահմանափակ) աճը: Իսկ ԱՄՆ-ում ժողովրդագրական դեֆիցիտը լրացվում է հիմնականում լատինամերիկյան միգրանտների շնորհիվ:

Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի համար բնորոշ են ծնելիության եւ բնական աճի բարձր եւ շատ բարձր ցուցանիշներն ու մահացության համեմատաբար ցածր ցուցանիշները: Սա նկատվում է զարգացող երկրներում: Անկախության նվաճումից հետո այդ երկրները հնարավորություն ստացան օգտագործելու ժամանակակից բժշկության, սանիտարիայի, հիգիենայի հնարավորությունները՝ առաջին հերթին համաճարակների դեմ պայքարում: Դա հանգեցրեց մահացության բավական կտրուկ նվազման: Իսկ ծնելիությունը հիմնականում մնաց ավանդաբար բարձր մակարդակի վրա: Այստեղ բոլորին գերա-

>>>

Եւ սպառնալիքներ

«»» զանցում են Աֆրիկայի եւ Լատինական Ամերիկայի պետությունները:

Բնակչությամբ ամենամեծ երկիրը Չինաստանն է: Չնայած ծնելիությունը կարգավորելու համար ձեռնարկվող միջոցառումներին՝ նրա բնակչությունը վաղուց անցել է միլիարդի սահմաններն ու կազմում է մոլորակի բնակչության ընդհանուր թվի շուրջ 22 տոկոսը:

Ժողովրդագրական քաղաքականությունը միշտ չէ, որ բոլոր երկրներում հաջողում է: Հաճախ բնակչության թվաքանակը փոփոխելուն ուղղված քայլերը չեն հանգեցնում սպասված արդյունքներին ու չեն արդարացնում այդ նպատակների համար ծախսված նյութական ու ֆինանսական միջոցները:

Խոսելով համաշխարհային մակարդակի ժողովրդագրական խնդիրների մասին՝ չի կարելի չըջանցել դրա այնպիսի կարելիոր բաղադրամասը, ինչպիսին բնակչության միգրացիան է: Դա հիմնականում հետեւանք է աղքատ տարածաշրջանների գերբնակեցվածության եւ զարգացած երկրներում աշխատող ձեռքերի անբավարության, ինչպես նաեւ՝ արդյունքը խոշորամասշտաբ հակամարտությունների ու աղետների:

Միշտ չէ, որ հարեւան երկրների բնակչության ակտիվ հոսքը բարիք է համարվում էմիգրանտներին ընդունող երկրի համար: Այսօր ընթացող խոշորամասշտաբ համաշխարհային միգրացիան հղի է էթնիկական հակամարտություններով: Իրենց երկրների սահմաններից դուրս առայժմ բնակվում է բնակչության մեկ տոկոսը միայն, բայց միգրացիան թափ է հավաքում: Էմիգրանտների մեծ զանգվածները եվրոպական երկրներում ստեղծում են որոշակի սոցիալական լարվածություն: Լայնորեն հայտնի են այդ հողի վրա ծագող տեղային հակամարտությունները Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում:

Միգրացիոն գործընթացն ամբողջ աշխարհում եւ ամեն առանձին երկրում տեղի է ունենում ամբողջատ, սակայն դրա ինտենսիվությունը ենթակա է կտրուկ տատանումների, որոնք կախված են, որպես կանոն, քաղաքական, ռազմական, տնտեսական, բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների ծագումից:

Կլիմի՝ արդյոք բնակչության միգրացիա 21-րդ դարում

Որոշ ֆուտուրոլոգներ (ապագայաբան) ենթադրում են, որ 21-րդ դարում մարդկությունը կանցնի առավել մատակյաց կենսակերպի: Բնակավայրը փոխելու անհրաժեշտություն չի լինի, քանի որ անցումն այդպիսի կենսակերպի պայմանավորված կլիմի էլեկտրոնային կոմունիկացիաների համակարգերի զարգացմամբ: Սակայն այդ հարյուրամյակում, ինչպես ցույց են տալիս վերջին տարիների վիճակագրությունն ու կանխատեսումները, դժվար թե նման բան հնարավոր լինի: Դատելով միգրացիոն հոսքերի ինտենսիվությամբ՝ միգրացիան ոչ միայն չի նվազի, այլեւ կուժգնանա կամ, ծայրահեղ դեպքում, կմնա այսօրվանից ոչ ցածր մակարդակի վրա: Մարդուն միշտ էլ բնորոշ է բնակվելու ավելի լավ տեղի որոնումը: Ուստի բնակչության միգրացիան միշտ եղել է, կա ու կլինի: Տարբեր պատճառներ են մարդուն մղում միգրացիայի, բայց մարդկության ամբողջ պատմությունը հազարամյակների ընթացքում հաստատում է այդ փաստը:

Սպառնալիքներ երկնքից

Մարդկությանը սպառնում են նաեւ տիեզերածին՝ կոսմոզեն բնույթի վտանգներ, օրինակ՝ երկրի բախումը երկնային մարմինների հետ:

Ելնելով ունեցած գիտելիքներից՝ կարելի է առանձնացնել հետեւյալ գործոնները, որոնք կարող են արտակարգ իրավիճակներ առաջացնել. Արեւի ակտիվությունը եւ տիեզերական եղանակը:

Արեւի ակտիվության եւ տիեզերական եղանակի գործոնների՝ Երկրի ու նրա շրջակա միջավայրի վրա թողած ազդեցությանը, որպես արտակարգ իրավիճակների ստեղծման պատճառի, վերջին ժամանակներս մեծ ուշադրություն է դարձվում գիտնականների, կառավարական ու միջազգային կազմակերպությունների կողմից:

Արեւային ակտիվության պատճառով փոփոխվող ճառագայթման ու աղտոտված մասնիկների հոսքերն ազդում են Երկրի մագնիսական դաշտին, իոնոսֆերային ու մթնոլորտին, օզոնի շերտին եւ մշտական ազդեցություն ունեն Երկրի շրջակա միջավայրի վրա: Արեւի մթնոլորտի փոփոխությունները, ներառյալ պայթյուններն ու արտանետումներն արեւաթագից եւ դրանց ու Երկրի մագնիսական դաշտի, մթնոլորտի վերին շերտերի փոխազդումներն ուսումնասիրված են լոկ մասնակիորեն, բայց հայտնի են դրանց հետ կապված մի շարք ֆիզիկական գործընթացներ, որոնք կարող են վտանգներ ստեղծել եւ հանգեցնել արտակարգ իրավիճակների:

Վերջին տարիներին աշխարհում աճել է անհանգստությունը Երկրի գլխին կախված «երկնաքարային» վտանգի առիթով: Երկնային մարմինների անկումը Երկրի վրա լիովին իրական է, այն ուղեկցում է Երկրի ամբողջ պատմությանը:

Աստղագիտության զարգացումը վերջին երկու հարյուր տարվա ընթացքում ցույց է տվել, որ Արեգակնային համակարգի տարածությունը մոլորակների միջեւ դատարկ չէ, այլ բնակեցված է երկնային մարմիններով, որոնց չափերը տարբեր են՝ մանրագույն փոշեհատիկներից մինչեւ հազար կիլոմետրանոց երկնաքարեր:

Ի դեպ.

Բոլոր երկնային մարմինները, որոնք գտնվում են մերձմոլորակային տարածության մեջ, անվանվում են արեգակնային համակարգության մասն մարմիններ: Դրանց դասակարգում են՝ չափերից ու յուրահատկություններից կախված. միջմոլորակային փոշի, երկնաքարեր, աստղեր ու ասդակերով: Վերջին ժամանակներս լրացուցիչ առանձնացնում են նաեւ այսուրեւ կոչված մինի-աստղեր:

Արեգակնային համակարգի մասն մարմիններից ամենաուսումնասիրվածներն աստղակերպերն են՝ մանր մոլորակները: Հենց նրանք էլ Երկրի հետ բախման պոտենցիալ վտանգ են ներկայացնում: Գիտնականների գնահատականներով՝ նման բախման հավանականությունը չափազանց չնչին է, բայց հնարավոր է:

Տիեզերական վտանգ են ներկայացնում նաեւ գիսաստղերը:

Ի դեպ.

Գիսաստղերն համարվում են Արեգակնային համակարգության հնաբնականներ: Նրանք հայտնի են ռա վաղ ժամանակներից: Գիսաստղերը գտնվում են էլիոսածել ուղեծրում եւ նրանց հայտնվելը երկնակամարում դարբերական բնույթ է կրում: Արեւի շուրջը գիսաստղերի ղոնյոյի փուլերը կազմում են 20-200 տարի (կարճ դարբերություն) եւ ավելի քան 200 տարի (երկար դարբերություն): Վերջիններից հայտնի են շուրջ 700-ը, ընդ որում՝ համարվում է, որ դրանցից մոտավորապես 100-ն իրենց հայտնաբերման ղախին առաջին անգամ էին անցնում Արեգակի մոտով:

Գիսաստղերն Արեգակնային համակարգության ամենակասեղի մարմիններն են: Նրանց միջուկները, որոնք կազմված են սա-



ռույցից ու առած գազերից, Արեգակին մոտենալիս գոլորացնում են իրենց նյութի մի մասը, որն էլ կազմավորում է այսուրեւ կոչված դոչը: Գիսաստղերի դոչերը ձգվում են Արեւի լույսի ճնշման ներքո՝ միլիոնավոր կիլոմետրերով, եւ այդ հսկայական գոյացությունները հեծությամբ են հայտնաբերվում:

Գիսաստղերի միջուկները չափերը կարող են կազմել հարյուրավոր կիլոմետրեր, իսկ Արեգակնային համակարգի կենտրոնով անցնող ուղեծրերը կարող են ուզածը ձեւն ունենալ, այդ դասճառով էլ բոլոր ասդակերովը դիտարկվում են որդես տիեզերական վտանգավոր օբյեկտներ:

Հարկ է նշել, որ վտանգ են ներկայացնում միայն գիսաստղերի միջուկների հետ բախումները:

Այդպիսի օբյեկտների կանոնավոր դիտումը կապահովի նրանց ուղեծրերի ճշգրտումն ու կանխատեսումների երկարացումը, հնարավորություն կծագի կանխատեսել բավական խոշոր երկնաքարի բախումը շատ տարիներ առաջ, ինչը թույլ կտա մարդկությանը նախապես համապատասխան միջոցներ ձեռնարկել:

Մյուս խնդիրն ասուպների համակարգված որոնման ու դիտարկման կազմակերպումն է: Նկատենք, որ երկարժամանակյա փուլեր ունեցող ասուպները, որոնց միջուկները տասնյակ կիլոմետրերի երկարություն ունեն, Արեգակնային համակարգության ներքին հատվածներում են հայտնվում հանկարծակի:

Երկնային մարմիններից Երկրի պաշտպանության խնդիրը լուծելուն մեզ մոտեցնում են 20-րդ դարի վերջի երկու տասնամյակի նվաճումները, այդ թվում՝ հրթիռատիեզերական տեխնիկայի կատարելագործումը, որն ապահովում է տիեզերական սարքերի՝ երկնային մարմիններին մոտենալու հնարավորությունը, միջուկային պայթուցիկ սարքերի ստեղծումը, որոնք ընդունակ են շեղելու երկնային մարմինը Երկրից կամ ոչնչացնելու այն, իրականացվող դիտումների հիմքի վրա առավել խոշոր՝ երկրին բախվելու հնարավորություն ունեցող երկնային մարմինների (երկնաքարեր ու ասուպ-աստղակերպեր) ցուցակագրումը, տիեզերական տարածության հսկողության համակարգի ստեղծումը. միջոցներ, որոնք կարող են հայտնաբերել տիեզերական, նույնիսկ մեծությամբ ոչ նշանակալի, վտանգավոր մարմիններ՝ Երկրի ուղղությամբ թռչելիս:

Վերջաբան

Վերը շարադրվածը վկայում է, որ մարդկությունը 21-րդ դար է մտել զլորալ վտանգների բարդ համակազմով՝ դինամիկորեն զարգացող, ներհակասական աշխարհի պայմաններում: Ինչպե՞ս դիմակայել սպառնալիքներին: Ի՞նչ կարող են ու ի՞նչ են պարտավոր անել գիտնականները, գործարարությունը, կառավարությունները, միջազ-

գային կազմակերպությունները, որ տնտեսությունը չխախտի շրջակա միջավայրի համար անթույլատրելի շեմերը, իսկ սոցիալ-քաղաքական կազմակերպությունը դուրս չգա հավասարակշռության սահմաններից: Նման հարցերով լեցուն է փիլիսոփայական, տնտեսական, սոցիոլոգիական եւ քաղաքական գրականությունը: Հայտնվել են բազմաթիվ այլընտրանքային ծրագրեր: «Ապագայի նախագծերի» նախապատրաստմանը միացել է նաեւ Միացյալ Ազգերի Կազմակերպությունը: Գրեթե բոլոր ներկայացուցչական միջազգային ժողովները զգուշացնում են զլորալ վտանգների մասին՝ բոլոր մակարդակների իշխանություններին միացյալ գործողությունների կոչ անելով:

Անցյալ դարի վերջին քառորդում արդեն համաշխարհային զարգացման ուղիների հարցը գլխավորն էր բոլոր գիտական բանավեճերում:

Նոր ուղեմիջերի ընդունումը պահանջում է ժողովրդագրական աճի մասին նախկին պատկերացումների վերանայում: Հավասարապես փոխվում է նաեւ վերաբերմունքը «տնտեսական աճ» կատեգորիային: Գլխավորը դառնում է ոչ թե քանակային չափանիշը, այլ աճի որակը, որն ընդունակ է ապահովելու կյանքի արժանավայել մակարդակ, լավ առողջություն, կրթություն, ազատ ժամանակ, ընդ որում՝ պահպանելով շրջակա միջավայրը:


Սկզբունքորեն փոխվում են նաեւ գիտատեխնիկական առաջընթացին տրվող գնահատականների մոտեցումները: Կույր հավատը տեխնիկայի ամենակարողության հանդեպ, «ամեն գնով» տեխնոլոգիական թռիչք իրականացնելու ձգտումը, տեխնոսֆերայի փաստացի իրավիճակի, բնակչության ընդհանուր կուլտուրական մակարդակի, տեխնոլոգիական կարգապահության, աշխատանքային էթիկայի հետ հաշվի չնստելը դառնում են խոշոր տեխնածին աղետների պատճառ:

Այսօր, զանգվածային տեղեկատվական միջոցների արագ զարգացման շնորհիվ, Երկրի բնակչությունն ավելի լավ, քան երբեւէ տեղեկացված է գալիք վտանգների մասին: Շատ ավելի վատ են գործերը՝ կապված կայուն հասարակություն ստեղծելուն ուղղված կոնկրետ վերափոխումների գործնական իրականացման հետ: Բարեփոխումների մեծ մասը հաշվարկված է երկար ժամկետների համար՝ 40-50 տարի: Բայց դրանք պետք է սկսեն իրականանալ արդեն այսօր: Սակայն՝ ոչ հասարակական կարծիքը, ոչ գործարարությունը, ոչ քաղաքականությունն առայժմ պատրաստ չեն փոփոխություններին, որոնք կուղեկցվեն կարճաժամկետ կորուստներով՝ հանուն երկարաժամկետ շափի:

Ինչեւէ, անհրաժեշտ է առավելագույնս լրջորեն վերաբերվել մարդկության առջեւ ամբողջ թափով ծառացած հիմնախնդիրներին, անհրաժեշտ է մտածել եւ, իհարկե, անհրաժեշտ է գործել:



Օրհան Փամուկ. Ստամբուլյան վախը



Ստամբուլի հին թաղամաս

Օրհան Փամուկը չերքեզական ծագում ունեցող թուրք գրող է, մի շարք ազգային եւ միջազգային մրցանակների դափնեկիր: 2006 թ. արժանացել է գրականության Նոբելյան մրցանակին: Գրողի ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի ավելի քան 50 լեզուներով, այդ թվում նաեւ հայերենով: Հայտնի է Հայոց ցեղասպանության եւ Քրդական հարցի վերաբերյալ իր քաղաքացիական դիրքորոշմամբ, որը հակասում է թուրքական պաշտոնական դիրքորոշմանը: Իր հայացքների պատճառով Փամուկը ենթարկվել է հալածանքների, տարագրվել, վերադարձել: Ներկայումս բնակվում է ԱՄՆ-ում: Ներկայացնում ենք գրողի ակնարկը՝ Ստամբուլում երկրաշարժի անընդհատ սպասման մասին:

Նախկինում ես երբեք չեմ մտածել այն մասին, որ երբեւէ բարձր մինարեթը, որը հենց պատուհանիս մոտ է եւ որը ես միշտ տեսնում եմ սեղանի մոտ նստած, մի օր կարող է ընկնել ինձ վրա: Մզկիթը կառուցվել է սուլթան Սուլեյման Մեծի հրամանով՝ իր որդու՝ արքայազն Ֆիհանգիի հիշատակին, որը երիտասարդ է մահացել: 1559 թվականից այն կանգնած է եղել ուղղաձիգ բլրի վրա՝ ուղղված դեպի Բոսֆորը, որպես «հավիտենության խորհրդանիշ»:

Ինձ այդ տնքին բերեց վերելի հարեանը, երբ եկել էր՝ կիսվելու երկրաշարժի մասին իր մտավախություններով: Ծիծաղելով, հուզվելով մենք անմիջապես դուրս եկանք պատշգամբ եւ աչքաչափով փորձեցինք չափել տարածությունը: Նախորդ 4 ամիսների ընթացքում Ստամբուլում եւ հարակից շրջաններում տեղի են ունեցել երկու երկրաշարժ եւ բազմաթիվ թեթեւ ցունցներ. մենք երկուսս էլ դեռ շատ լավ էինք հիշում եւ՝ դրանց, եւ՝ երեսուն հազար զոհերի մասին: Բացի այդ (եւ դա կարդացի հարեանիս աչքերում, որն իմժենե-շինարար է) մենք երկուսս էլ հավատում էինք գիտնականների կանխատեսումներին այն մասին, որ շուտով Ստամբուլի մոտակայքում՝ Մարմարի ծովում, տեղի կունենա եւս մեկ հզոր երկրաշարժ, որը կավերի քաղաքը եւ կխլի հարյուրավոր մարդկանց կյանքեր:

Մինչեւ մինարեթներն ընկած տարածության չափումն աչքաչափով մեզ չհամոզեց: Թերթելով գրքերն ու հանրագիտարանները՝ մենք պարզեցինք, որ անցած 450 տարիների ընթացքում Ֆիհանգիի մզկիթը, որ մենք համարում էինք «հավիտենության խորհրդանիշ», երկու անգամ ավերվել ու նորից վերականգնվել է երկրաշարժերի եւ իրդեհների պատճառով, եւ որ մեր դիմաց կանգնած ոչ միմարեթները, եւ ոչ էլ զմբեթը, բնօրինակը չեն: Մեր կատարած փոքրիկ հետազոտությունը ցույց տվեց, որ Ստամբուլի բոլոր ինչ մզկիթներն ու հուշարձանները՝ ներառյալ Այա-Սոֆիան, որի զմբեթն ավերվել է շինարարության ավարտից 20 տարի հետո երկրաշարժի պատճառով, գոնե մեկ անգամ փլուզվել են երկրաշարժից, մեծ մասն էլ մի քանի անգամ վերականգնվել է՝ «մեծ ծանրաբեռնվածություն կրելու հաշվարկով»:

Ինչ վերաբերում է միմարեթներին, ապա այս դեպքում գործերն ավելի վատ էին: Ամենահզոր երկրաշարժերի ժամանակ, որ տեղի էին ունեցել վերջին 500 տարիների ընթացքում (օրինակ՝ 1509 թվականին, որը «փոքր Դատաստանի օր» անվանվեց կամ էլ 1766 եւ 1894 թվականների երկրաշարժերը), փլուզվել են հիմնականում ոչ թե զմբեթները, այլ միմարեթները: Վերջին երկու երկրաշարժերից հետո ես բազմաթիվ փլուզված միմարեթներ եմ տեսել եւ՝ հեռուստատեսությամբ, եւ՝ աղետի գոտիներում, որտեղ մենք եղել ենք: Ընկնելու ժամանակ դրանք կիսում էին տները, ինչպես երկար բարակ դամակը. ու-

սանողական հանրակացարանները, որտեղ պահակները քնաթաթախ մարդի էին խաղում, տները, որտեղ մայրերը երեխաներին էին կերակրում կամ էլ, ինչպես դա եղավ Բուլի երկրաշարժի ժամանակ, բնակարանները, որտեղ ամբողջ ընտանիքն այդ պահին հեռուստաառարկված էր նայում այն մասին, թե կլինե՞ն արդյոք երկրաշարժեր, թե՞ ոչ:

Միմարեթների մեծ մասը, որ չէր ավերվել վերջին երկու երկրաշարժերի ժամանակ, լուրջ վնասվել էր: Վերականգնման ոչ ենթակա մասերը քաշում էին շղթաներով, բարձրացնում կռունկներով եւ փշրելով մասնատում: Եւ՝ ես, եւ՝ իմ ընկերը շատ անգամներ տեսել ենք հեռուստացույցով միմարեթների ավերման դանդաղեցված կադրեր, հետեւապես գիտեինք՝ ինչպես է ընկնում այն եւ ինչ անկյան տակ: Ես եւ հարեանս փորձում էինք պատկերացնել մեր միմարեթի անկման թեքությունը: 1999 թ. օգոստոսի 17-ի երկրաշարժից հետո դրա պատշգամբի վերնամասը փոքր-ինչ թեքվել էր, իսկ մեկուկես ամիս անց կիսալուսնի տակի մեծ քարը կայծակից ճաքել, պոկվել ու ընկել էր ներքեւ:

Չնայած ոչ այնքան սփոփիչ տեղեկատվությանը, մենք վերցրինք պարանը եւ չափեցինք մեր շենքի եւ միմարեթի հեռավորությունը: Պարզվեց, որ եթե անգամ ընկնի ուղիղ անկյան տակ, մեր վերելի հարկերին այն չի հասնի: Մեր շենքը, որ ուղղված է դեպի Բոսֆորը, բարձր էր միմարեթից եւ բավական հեռու էր նրանից: Գնալիս հարեանս ասաց. «Միմարեթը դժվար թե ընկնի մեզ վրա: Ավելի շուտ, մեր շենքը կընկնի դրա վրա»:

Հաջորդ օրերին, երբ ես փորձում էի հասկանալ՝ կընկնի՞ արդյոք այն շենքը, որտեղ ես աշխատում եմ, միմարեթի վրա, եւ որքա՞ն է ընդհանրապես այն շենքերի ավերվելու հավանականությունը, որտեղ ես ապրում եւ աշխատում եմ, հարեանիս հետ այլեւս չհանդիպեցինք: Ոչ այն պատճառով, որ ինձ դուր չէր գալիս նրա ցինիկ հումորը. սա բնական արձագանք է այն մարդկանց կողմից, ում վտանգ է սպառնում, պատճառն այն է, որ նա, ինչպես եւ մենք բոլորս, զգում էր, որ սեփական մահվան հնարավոր տարբերակների կանխատեսումը խիստ անձնական խնդիր է: Իմ հարեանը մեր վեց հարկանի շենքի պատից մի կտոր պոկեց եւ փորձաքննության ուղարկեց Ստամբուլի տեխնիկական համալսարան: Երիտ է՝ չխոստացան, թե պատասխանը շուտ կլինի, որովհետեւ նույն բանն էին արել նաեւ հազարավոր ուրիշ մարդիկ: Ես գիտեի, որ այդ սպասումը նրան մի փոքր կհանգստացնի. ի վերջո նա արել էր իրենից կախված հնարավոր ամեն ինչ:

Իսկ ես հասկացա, որ իմ հանգստությունը տեղեկատվություն հավաքելու մեջ է: Երկրաշարժերի գոտիներում լինելով, հասկացա, որ կառույցները փլուզվում են հիմնական երկու պատճառով. առաջինը՝ անորակ շինանյութ, երկրորդը՝ ոչ ամուր հիմք: Այնպես որ ես, ինչպես շատ ուրիշները, փորձեցի ինժեներ-շինարարներից պարզել, թե ինչպիսի հողի վրա են կառուցված այն շենքերը, որտեղ ես իմ ամբողջ կյանքն եմ ապրել: Ես ուսումնասիրում էի գծագրերն ու փնտմաները, խորհրդակցում էի մասնագետների հետ, գրուցում էի բոլոր նրանց հետ, ովքեր, ինչպես եւ ես, ճաշակել էին վախի եւ անհանգստության համը:

Չնայած վերջին երկու երկրաշարժերը քաղաքի կենտրոնից 150 կմ հեռավորության վրա են եղել, ցնցումներից արթնացել էր ամբողջ Ստամբուլը: Երեսուն հազար մարդկանց մահը վկայում էր այն մասին, որ շինարարությունը Թուրքիայում իրականացվում էր անորակ եւ անգորագետ ձեւով: Ուստի քսան միլիոն մարդկանց համար, ովքեր ապրում են Ստամբուլի ծայրամասերում, ակնկալվող երկրաշարժի մասին մտքերը վերածվել էին գիշերային մղձավանջի. նրանք բոլոր հիմքերն ունեին զգուշանալու,

որ իրենց տները կարող են փլուզվել: Կառուցապատման մեկ ընդհանրական համակարգի բացակայությունը, անորակ շինանյութը, անվերջ կառուցապատումները, վերակառուցումներն ու վերապլանավորումները, որոնք իրականացվում էին առանց անվտանգության կանոններին հետեւելու եւ առանց որեւէ հստակ ինժեներական հաշվարկների (շատ տներում անմտորեն քանդվել էին կրող պատերն ու սյուները), մեր տները վերածել էին մահվան թակարդի: Շատերը փորձում էին մխիթարել իրենք իրենց նրանով, որ իրենց տները կառուցել են սեփական հայրերն ու պապերը, ինչը երաշխավորում է կառույցների ամրությունը: Բայց եթե անգամ դուք վստահ եք, որ ձեր տունը չի դիմակայի հզոր երկրաշարժի, եւ որոշում եք ամրացնել այն, որի գումարը ձեր տան արժեքի մեկ երրորդն է կազմելու, դուք, միեւնույն է, ստիպված եք լինելու համոզել ցինիկ, ամեն ինչի հանդեպ անտարբեր, տգետ, անհոգի եւ, ամենայն հավանականությամբ, գումար չունեցող ձեր հարեաններին, ովքեր ոչինչ չեն ուզում անել: Ստամբուլում ես չգիտեմ ոչ մի շենք, որտեղ բնակիչները, համաձայնության գալով, սկսել են շենքի ամրացման աշխատանքները: Թեպետ ինչ հարեաններ... Շատերը չեն կարողանում համաձայնության գալ անգամ սեփական կանանց, ամուսինների, երեխաների հետ: Ոմանք դրա համար պարզապես գումար չունեն եւ ենթարկվելով ճակատագրին եւ շարունակելով ապրել վախի մթնոլորտում՝ մխիթարություն էին գտնում ցինիկ արտահայտություններում, ինչպես, օրինակ. «Լավ, եթե անգամ ես գումար վատնեմ եւ ամրացնեմ մեր շենքը, իսկ եթե հանկարծ դիմացի շենքն ընկնի մեզ վրա...»:

Այս անօգնականության եւ անհուսության պատճառով միլիոնավոր ստամբուլցիներ տառապում են մղձավանջներից: Իմ սեփական մղձավանջները նման են այլոց մղձավանջներին: Սկզբում դուք տեսնում եք անկողինը, որտեղ պատրաստվում եք պառկել: Պառկելուց առաջ մտածում եք՝ կլինի՞ արդյոք երկրաշարժ: Եւ այն հանկարծ սկսվում է, եւ այն էլ շատ ուժեղ: Դուք երկար ժամանակ օրորվում եք անկողնի հետ միասին՝ ամեն ինչ տեղի է ունենում դանդաղեցված նկարահանման պես, իսկ հետո ձեր փոքրիկ տունը, ձեր սենյակը, ձեր անկողինն ու շուրջը գտնվող բոլոր իրերը սկսում են տատանվելով փոխել իրենց տեղերն ու ձեւերը: Սենյակի պատերը դանդաղ տեղաշարժվում են, եւ ձեր առջեւ հառնում է աղետի տեսարանը, որ նման է ուղղաթիռից նկարահանված կադրերի, որոնք դուք տեսել եք հեռուստացույցով: Բայց, չնայած այդ դժոխային խառնաշփոթին, հոգու խորքում դուք գոհ եք, որ վկան եք այդ աղետի եւ ողջ եք մնացել: Մայրը, հայրն ու կինը, որոնք մեղադրում են ձեզ տեղի ունեցածի մեջ, նույնպես ողջ են: Այս երազներն այցելում են մարդկանց դատապարտվածության զգացումի պատճառով. դրա համար էլ արթնացումը նրանց երջանկություն է թեթևություն է բերում: Վախից վեր թռչելով եւ գտնվելով քնի եւ իրականու-

թյան միջեւ՝ մեզ թվում է, թե երկրաշարժն իսկապես տեղի է ունեցել. մենք հարցերով նետվում ենք դեպի հարազատները՝ այդպես էլ չհասկանալով՝ իրականու՞մ, թե՞ երազում է երկրաշարժ եղել, կամ էլ ճանկում ենք թերթերը՝ փնտրելով ցնցումների մասին տեղեկությունները:

Քանի որ մենք չենք հավատում, որ մեր շենքերն ամուր են, եւ ոչ մի կերպ չենք կարողանում ազատվել Ստամբուլում տիրող խուճապից, հանկարծ մտածեցինք, որ մեզ օգնել կարող են միայն գիտնականները:

Պրոֆեսոր Իշկլարան՝ Թուրքիայում առաջին եւ միակ սեյսմիկ կայանի տնօրենը, պատմեց մեզ, որ Թուրքիայի հյուսիսում, ինչպես Կալիֆորնիայում, գոյություն ունի բեկման գիծ, որն անցնում է երկրի ամբողջ տարածքով, եւ որ վերջին երկրաշարժերը սկսել են արելելից եւ աստիճանաբար մոտեցել Ստամբուլին: Առաջին հզոր երկրաշարժից հետո՝ 1999 թ. օգոստոսի 17-ին, երբ նրա հետեւից կազում էր ամբողջ մամուլը, նա ամեն երեկո մի հեռուստաընկերությունից մյուսն էր տեղափոխվում՝ կրկնելով իր տեսությունները, որոնք տարիներ շարունակ ոչ ոք չէր լսում, իսկ բոլոր հաղորդավարները նրան միայն մեկ հարց էին տալիս. «Պրոֆեսոր, ասեք խնդրեմ, այսօր գիշերը երկրաշարժ կլինի՞»: Սկզբում նա պատասխանում էր. «Երկրաշարժ կարող է լինել ամեն րոպե»:

Իսկ հետո, երբ տեսավ, որ միլիոնավոր մարդիկ, վախից խելագարված, ամեն թեթեւ ցնցումից դուրս են թռչելու պատուհանից, նա որոշեց պատասխանել այլ կերպ. «Մեզ համար պարզ չէ, թե երբ կարող է երկրաշարժ լինել»:

Առաջին հզոր երկրաշարժից երկու օր անց ավելի հաճախակի դարձան հետցնցումները, եւ ամբողջ Թուրքիան հեռուստատեսությամբ հետեւում էր պրոֆեսորի ելույթներին. նա ակնարկեց, որ գիշերը, հնարավոր է, երկրաշարժ տեղի ունենա: Մարդիկ, կորցնելով սառնասրտությունը, նորից սկսեցին գիշերել այգիներում եւ փողոցներում: Ստամբուլցիները շատ էին սիրում արտաքնապես էյնշտեյնի շատ նման այս հաճելի պրոֆեսորին, այն պատճառով, որ այն օրերին, երբ անցում մարդիկ վախից կորցրել էին իրենց բոլորը հույսերը, նա ասում էր հենց այն, ինչ մենք ուզում էինք լսել, անգամ եթե նրա խոսքերն այնքան էլ հուսադրող չէին (օրինակ, ենթադրություններ էր անում այն մասին, որ բեկման գիծը դեռ բավական հեռու է Ստամբուլից): Նա ժպտում էր անգամ այն ժամանակ, երբ ոչ այնքան ուրախալի նորություն էր հայտնում:

Կային նաեւ ուրիշ գիտնականներ՝ ավելի խիստ եւ սկզբունքային: Նրանց ստամբուլցիներն ատում էին: Նրանցից մեկն էր երկրաբան պրոֆեսոր Շենգյուրը: Նա արժանացավ համընդհանուր բարկության եւ ատելության, երբ անտարբերությամբ եւ անկողնակալությամբ առաջին երկրաշարժն անվանեց «շատ գեղեցիկ» այն դեպքում, երբ այն երեսուն հազար մարդկանց կյանքեր էր խլել: Իսկ ատելության իրական պատճառը հանդեպ Շենգյուրի եւ նրա նմանների այն էր, որ նրանք անհերքելիորեն ապացուցում էին, որ Ստամբուլին մոտեցող երկրաշարժն աներեւակայելի հզոր է լինելու: Եւ խոսում էին նրանք այդ մասին ճշմարիտ գիտնականների անտարբերությամբ: Անաչառությունն ու յուրաքանչյուր ղաժանությունը գիտնականը բացատրում էր շատ պարզ. անորակ բնակելի շենքերի կառուցման ժամանակ գիտության երկջուտ ձայնն այդպես էլ ոչ ոք չլսեց, ինչպես եւ, իմիջիայլոց, ոչ ոք ուշադրություն չէր դարձնում միջազգային մամուլին, ովքեր միլիոնավոր անգամներ հղումներ էին անում իր կանխատեսումներին: Այդ պատճառով էլ նա հաճույքով պատմում էր միլիոնավոր անտեղյակ ստամբուլցիներին այն մասին, թե շուտով ինչ է տեղի ունենալու նրանց հետ:

>>>

Երկրաշարժից

Հեռուստատեսային բազմաթիվ ծրագրերում, որտեղ հրավիրում էին նաեւ գիտնականներին, սովորական հյուրեր էին գեղեցկուհիներն ու բողոքիլոհինգի արքաները, իսկ հաղորդավարները, չլսելով գիտնականների մանրամասն բացատրությունները, միայն մեկ հարց են տալիս. «Ասե՛ք, խնդրեմ, մոտակա ժամանակներում Ստամբուլում հզոր երկրաշարժ կլինի՞» եւ ի՞նչ ուժգնությամբ»:

1999 թ. նոյեմբերի 14-ին թուրքական գլխավոր լրատվական ծրագրերից մեկում այնպիսի թեժ քննարկում սկսվեց Մարմարի ծովի բեկման գծի վերաբերյալ վերջին տվյալների շուրջ, որ Քլիմոնի այցին տրամադրեցին 45-ից միայն 5 րոպե: Ծրագիրն ավարտվեց, իսկ մենք այդպես էլ չստացանք մեր հարցերի պատասխանները, ուստի մեզ մնում է միայն սպասել նոր քննարկումների, հարցերի եւ նոր հայտարարությունների:

Քանի որ գիտնականներն այդպես էլ չկարողացան հստակ եւ համոզիչ կանխատեսել իրավիճակը, կյանքի համար վտանգավոր տներում ապրող միլիոնավոր ստամբուլցիներ եկան այն եզրահանգման, որ իրենք ինքնուրույն պետք է ելք գտնեն այս մղձավանջից: Ոմանք իրենց հույսը դրեցին Ալլահի վրա, ոմանք որոշեցին ուղղակի մոռանալ ամեն ինչ, ոմանք էլ համզատությամբ սուտ զգացումով համակվեցին՝ անվտանգության որոշ քայլեր ձեռնարկելով:

Հիմա մարդիկ մահճակալի մոտ հզոր լապտերներ ունեն, որպեսզի էլեկտրաէներգիայի անջատումների դեպքում արագ կարողանան դուրս գալ շենքից, քանի դեռ հրդեհ չի բռնկվել: Լապտերների կողքին դրված են սուլիչներ եւ բջջային հեռախոսներ, որպեսզի փրկարարներին ազդանշան տան, եթե հանկարծ հայտնվեն փլատակներում: Ոմանք պարանոցից սուլիչներ եւ բանալիներ են կախում, որպեսզի դրանց փնտրուուքի վրա ժամանակ չծախսեն: Շատերը դադարել են փակել դռները, որ վայրկենապես դուրս վազեն իրենց երկու-երեքհարկանի տներից, մյուսների դեպքում պատուհաններից թելեր են կախված, որ արագ իջնեն այդ: Երկրաշարժից հետո մի քանի ամիս շարունակ ստամբուլցիներին մեկը տանը մշտապես սաղավարտ էր կրում, քանի որ աղետը տեղի էր ունեցել գիշերը, շենքերի բնակիչները, անգամ նրանք, ովքեր ապրում էին բարձր հարկերում եւ միեւնույնն է չէին հասցնելու դուրս վազել, հագնված էին քնում: Ես լսել եմ անգամ այնպիսի մարդկանց մասին, ովքեր խիստ կանախ էին լուգարանում եւ պետքարանում գտնվելու ժամանակահատվածը, եւ այնպիսի զույգերի մասին, ովքեր կորցրել էին հետաքրքրությունը սիրային հարաբերությունների նկատմամբ: Շատ տներում պատրաստ պահում էին պարուսկներ՝ լցված առաջին անհրաժեշտության իրերով՝ ուտելիք, մուրճ, լապտեր եւ նման այլ իրեր, որ կարող են պետք գալ՝ բոցավառվող եւ ավերվող քաղաքում կենդանի մնալու համար: Ինչ-որ մեկը մեծ գումար էր պահում իր մոտ, որպեսզի հետո ապրուստի միջոց ունենա: Փոխվել էր իրավիճակը տներում. անկողիները պատերից, կահույքից հեռու էին տարել: Վառարանների եւ սառնարանների կողքին փոքրիկ կացարաններ էին պատրաստել՝ այսպես կոչված «կյանքի եռանկյուններ», որտեղ հնարավոր կլիներ պաշտպանվել ընկնող առաստաղից:

Ես նույնպես ամրացրել էի իմ երկար սեղանի մի անկյունը, որի մոտ նստած՝ արդեն 25 տարի գրքեր եմ գրում: Գրադարանի ամենահաստ գրքերից՝ 40 տարի առաջ հրատարակված «Բրիտանիկայի» հատորից, էլ ավելի վաղ լույս տեսած «Իսլամի հանրագիտարանի» եւ «Ստամբուլյան հանրագիտարանի» հատորներից, որտեղից էլ տեղեկություններ եմ քաղել երկրաշարժերի մասին, սեղանիս տակ ապաստարան պատրաստեցի: Համոզվելով, որ այն բավականաչափ ամուրի է, որպեսզի դիմակայի բետոն-

նե ծածկի անկմանը, ես մի քանի անգամ փորձարկեցի իմ ապաստարանը ենթադրյալ երկրաշարժի ժամանակ՝ պառկելով սաղմնային վիճակի դիրքով, ինչպես սովորեցրել էին՝ ներքին օրգանները պաշտպանելու համար: Խորհուրդ էր տրվում նաեւ «ապաստարանի» անկյուններից մեկում մի փոքր թխվածքաբլիթ, ալյումինե տարայով մի քիչ ջուր, սուլիչ եւ մուրճ դնել: Բայց դա ես չարեցի. միգուցե այն պատճառով, որ այդ իրերի ներկայությունից, որ ինձ կհիշեցներ դրսի աշխարհի մասին, ավելի՞ կհուսալքվեի:

Ոչ, պատճառն այլ էր: Ես այդ ամենի արտացոլումը տեսնում էի նաեւ շատ ուրիշներում, ովքեր սակայն ոչ միշտ էին խոսում այդ մասին. ես դա կարող եմ անվանել ամոթի զգացում, ամոթ՝ սեփական մեղավորությամբ եւ խղճահարությամբ համեմված: Նման զգացում է առաջանում, եթե ձեր հարգատների մեջ հարբեցող կամ էլ հանցագործ կա, եթե դուք ֆինանսական կորուստներ եք ունեցել. դուք ցանկանում եք մեմակ մնալ, հեռու լինել տհաճություններից՝ միաժամանակ ամաչելով դրանց համար: Սիս այդպես էլ ես չէի կարողանում պատասխանել իմ ընկերների, ծանոթների, արտասահմանում ապրող հրատարակիչների զանգերին եւ նամակներին, երբ նրանք հարցնում էին, թե ինչպես եմ գործերս: Ես ամփոփվել էի ինքս իմ մեջ, ինչպես մի մարդ, ով հենց նոր է իմացել, որ իր մոտ քաղցկեղ է հայտնաբերվել, իսկ հիմա էլ փորձում է թաքցնել դա: Եթե առաջին օրերին ես ցանկություն էի ունեի խոսել այդ մասին, ապա միայն նրանց հետ, ովքեր վախենում էին երկրաշարժից... վախենում էին, ինչպես եւ ես: Թեպետ մեր զրույցներն այդ թեմայով ենթադրում էին գիտնականների ելույթների եւ հարցազրույցների անվերջ մեջբերումներ՝ ինչպես լավատեսական, այնպես էլ հուսալքող:

Կար ժամանակ, երբ ես մշտապես գրքեր էի կարդում անցած երկրաշարժերի մասին՝ փորձելով հասկանալ, թե ինչպես եմ դրանք անդրադարձել այն թաղամասերի վրա, որտեղ գտնվում եմ իմ բնակելի եւ աշխատանքային բնակարանները: Պարզվեց, որ 1894 թ. երկրաշարժի ժամանակ իմ թաղամասում տուժել եմ միայն մի քանի շենքեր:

Մի ամսագրում, որտեղ մշտապես հոդվածներ են տպագրվում կանխատեսվող երկրաշարժերի մասին, ես գտա մի սխեմա, որն ինձ համար գայրույթի եւ մոլորության պատճառ դարձավ: Այդ սխեմայի վրա իմ թաղամասը մուգ գույնով էր նշագրված, որպես ամենավտանգավորներից մեկը: Ինձ թվա՞ց: Ի՞նչ կարելի է հասկանալ այդքան փոքր սխեմայի վրա: Խոշորացույցը ձեռքիս՝ ես փորձում էի հասկանալ՝ արդյոք մահվան գույնով ներկվա՞ծ են իմ փողոցն ու շենքը, փորձում էի համեմատել այս փոքրիկ սխեման ավելի մեծ քարտեզների հետ: Ուրիշ ոչ մի տեղ իմ թաղամասը նշագրված չէր որպես վտանգավոր տեղամաս: Մտածելով, թե սա ինչ ոչ սխալմունք է, որի մասին պետք է մոռանալ՝ ես հասկացա, որ կմոռանամ, եթե ոչ ըբի ոչինչ չպատմեմ այդ մասին:

Մի քանի օր անց գիշերվա կեսին ես նորից, խոշորացույցը ձեռքիս, ուսումնասիրում էի քարտեզի վրայի «գորշ հետքը»: Հետո ես փորձեցի գտնել այն մարդուն, ով գծել է այդ քարտեզը: Մեր տան սեփականատերը, տեղեկանալով իմ մտադրությունների մասին, փնտրեց եւ գտավ նկարներ, որոնք ինքը նկարել էր քառասուն տարի առաջ, երբ շենքի հիմքն էին կառուցում: Քանի որ ես արդեն քառասուն տարի է ապրում եմ այս շենքում, հիմ նկարները վերակենդանացրին իմ մանկական հիշողությունները, բայց, ձեռքս վերցնելով խոշորացույցը, ես նորից սկսեցի փնտրել ամուր ժայռաբերկրներից պատրաստված հիմքի մասերը: Գիտական մտքի եւ հիստերիայի անհասկանալի շփոթությունը, որ սերմանում էին զանգվածային լրատվամիջոցները, ստիպում էին Ստամբուլի բնակիչներին բազմաթիվ անգում գիշ-



երներ անցկացնել. մեկ մեզ վստահեցնում էին, թե դժոխք է տիրելու, մեկ էլ խոստանում, թե երկրաշարժի հզորությունը չի գերազանցի Ռիխտերի սանդղակով 5 բալլ: Ես հասկացա, որ լրագրողներն այնքան էլ լուրջ չեն վերաբերվել իրենց հրապարակած տեղեկատվությանը, բայց ինձ շարունակում էր տանջել այն միտքը, թե ինչպես այդ «գորշ հետքը» կարող է ազդել ինձ վրա, իմ կյանքի ու իմ տան վրա:

Եւ այդ ամբողջ ընթացքում ինձ էին հասնում բազմաթիվ զրույցներ ու բամբասանքներ, որոնք անհավանական արագությամբ տարածվում էին ամբողջ քաղաքում: Երկրաշարժից հետո ես ժպտացի միայն այն ժամանակ, երբ լսեցի, որ ծուլում ջուրն արդեն սկսել է տաքանալ, եւ դա իբրեւ թե ապացույց է այն բանի, որ նորից երկրաշարժ է լինելու, կամ էլ ինչ-որ անհասկանալի կապ է երկրաշարժի եւ արեգակնային խավարման միջեւ, որ տեղի ունեցավ մեկ շաբաթ առաջ: «Սի՛ ծիծաղիր, - բարկացած հրամայեց ինձ մի աղջիկ: - Հանկարծ երկրաշարժ կլինի, եւ մենք քո պատճառով չենք լսի ծայրը»: Ասում էին՝ երկրաշարժը կազմակերպել էին քուրդ անջատողականները. ինչ-որ մեկը խոսակցություններ էր տարածել, որ ամերիկացիներն են ջանացել օգնել, ովքեր հիմա ռազմական նավով ինչ-որ չափից դուրս արագ հասել էին աղետի վայր: «Ի՞նչ ես մտածում, - հարցնում էին մարդիկ, - ինչպե՞ս նրանք կարողացան այդքան արագ հասնել այստեղ»: Պատմում էին, որ ինչ-որ մեկը տեսել է, թե ինչպես է կապիտանը, նավից ափին մայելով, տխուր ասել. «Այս ի՞նչ արեցիք մենք»: Հետագայում այս խոսակցություններն ավելի ու ավելի լուրջ բնույթ սկսեցին ստանալ: Դեմապանը, ով առավոտյան զանգահարեց, որպեսզի կաթ եւ թերթ բերի, հայտնեց, որ երեկոյան ժամը 8:10-ի սահմաններում Ստամբուլը գետնին կհավասարվի հզորագույն երկրաշարժից. կարծես թե զգուշացնում էր, որ երեկոյան մեկ ժամով ջուրը փակվե: Խոսում էին մի գիտնականի մասին, ով, իմանալով ճշմարտությունը, ուղղակի փախել է Եվրոպա: Բամբասանք տարածվեց, որ ղեկավարությունը, ում համար հաստատ սկզբից էլ ամեն ինչ պարզ է եղել, գաղտնի պատրաստվել է արտասահմանից ներկրել միլիոնավոր պոլիէթիլենային պարկեր՝ նախատեսված դիակների համար: Ինչ-որ մեկը խոսակցություն էր լսել այն մասին, թե իբր գինվորներն արդեն եղբայրական գերեզմանոցներ են փորում քաղաքից դուրս անբնակ տարածքներում: Յեշիլ-Յուրտեում՝ Ստամբուլի ամենաթանկ թաղամասերից մեկում, որտեղ անկայուն է հողը, տներն սեփականատերերը ժողովի ժամանակ բաժանվել էին երկու ընդդիմադիր ճամբարների. մի մասը ցանկանում էր անվտանգության խնդիրները քննարկել, մյուսները փորձում էին համոզել, թե ավելորդ աղմուկը կազդի տների գների վրա: Գրեթե նույն ժամանակ իմ լրագրող ընկերն ինձ բացատրեց, որ դադարեցվել է այն քարտեզների հրապարակումը, որոնք անհրաժեշտ էին «գորշ հետքի» ուսումնասիրության համար. հրատարակիչները պարզապես խուսափում էին անշարժ գույքի գործակալների եւ սեփականատերերի ատելությանն արժանանալուց:

Երկու ամիս անց իմ հարեւանն ասաց, որ այն համալսարանը, ուր ինքն ուղարկել է մեր շենքի բետոնե պատի մոուլը, պատասխան է ուղարկել իրեն: Եզրակացությունն այսպիսին էր. շենքը, որտեղ ես իմ գրքերն

եմ գրում, չի կարելի համարել ո՛չ ապահով, ո՛չ էլ վտանգավոր: Մենք ինքներս պետք է որոշենք, թե ինչպես դրան վերաբերվենք: Գրեթե միեւնույն ժամանակ ես իմացա, որ երաժշտության բնագավառում աշխատող իմ ընկերը տուժել է երկրաշարժից. Գյուլջուկում նրա տունն անպիտան է դարձել բնակության համար (այս թաղամասում ամենաշատ ավերածություններն են տեղի ունեցել): Նա տեղավորվել է «Հիլթոն» հյուրանոցում, սակայն չվստահելով նրա ամրությանը, ապրում է փողոցում՝ մշտապես խոսելով բջջայինով եւ արագ այս ու այն կողմ քայլելով, թե իբր կարելուր հարցերով է զբաղված: Ասում էին՝ նա միշտ շտապում էր ինչ-որ տեղ՝ երբեք կանգ չառնելով եւ անընդհատ կրկնելով. «Ինչու՞ մենք չենք հեռանում այս քաղաքից, ինու՞» չենք հեռանում»:

Շատերն են հեռանում Ստամբուլից՝ աղքատ եւ պոտենցիալ վտանգավոր թաղամասերից, որտեղ զոհվել են հազարավոր մարդիկ: Բնակարանների զներն ընկնում են: Բայց շատ ստամբուլցիներ շարունակում են ապրել սովորական կյանքով: Մեր կարգավիճակում բողոքները գիտնականներից, բամբասանքների նկատմամբ հավատը, մոռացությունը, նոր հազարամյակի տոնակատարություններով ուշադրությունը շեղելու փորձերը, ողջագուրումը սիրելիների հետ եւ անտարբերությունը հաշտեցնում են նրանց երկրաշարժի մտքի հետ եւ օգնում են «ապրել դրա հետ», ինչպես նորածն է ասել հիմա: Երկու օր առաջ մի երիտասարդ շատ երջանիկ կին՝ նոր ամուսնացած, եկավ ինձ մոտ, որպեսզի քննարկենք իմ գրքի կազմի մակետը, եւ անկեղծ պատմում էր իր՝ վատ մտքերից շեղվելու մեթոդների մասին:

«Դու հավատում ես, որ երկրաշարժ է լինելու, եւ վախենում ես, - խոսում էր՝ ունքերը վեր բարձրացնելով: - Բայց ամեն մի վայրկյանը դու ապրում ես այնպես, կարծես թե այն վերջինն է: Հակառակ դեպքում ոչինչ անել հնարավոր չի լինի: Բայց դա մեջ հակասություն կա: Օրինակ, մենք գիտենք, որ հիմա պատշգամբ դուրս գալը շատ վտանգավոր է: Բայց, միեւնույնն է, ես հիմա դուրս եմ գալիս պատշգամբ», - ասաց նա եւ դանդաղ, զգույշ բացելով դուռը՝ դուրս եկավ պատշգամբ: Ես չշարժվեցի տեղիցս, իսկ նա որոշ ժամանակ մայրում էր մզկիթին եւ Բոսֆորին: «Քանի դեռ ես կանգնած եմ այստեղ, - խոսեց որոշ ժամանակ անց, - ես չեմ հավատում, որ երկրաշարժը հենց այս պահին կլինի: Եթե հավատամ, վախից չեմ կարողանա կանգնել այստեղ»: Շուտով նա վերադարձավ սենյակ եւ փակեց դուռը: «Ահա թե ինչ եմ ես անում, - ասաց նա թեթեւ ժպիտով: - Ես դուրս եմ գալիս պատշգամբ եւ քանի դեռ ես այնտեղ եմ, ինձ հաջողվում է մտային ինչ-որ փոքրիկ հաղթանակ տանել երկրաշարժի նկատմամբ: Այդ փոքրիկ հաղթանակներով մենք կհասնենք նրան, որ հզոր երկրաշարժ չի լինի»:

Երբ նա հեռացավ, ես դուրս եկա պատշգամբ՝ հիանալու միմարեթով, Բոսֆորի գեղեցկությամբ եւ առավոտյան մեզի մեջ գտնվող Ստամբուլով: Ես իմ ամբողջ կյանքն եմ ապրել այս քաղաքում: Եւ ես ինքս ինձ հարցրի, ինչպես փողոցում թափառող այն մարդը. «Ինչու՞ մենք չենք հեռանում»:

Որովհետեւ ես չեմ պատկերացնում իմ կյանքն առանց Ստամբուլի:

**Ռուսերենից թարգմանեց՝
Լուսինե Մանուկյանը**



մասնագետի անկյուն

«Կապույտ մահը» մեր տներում. ինչպես կանխարգելել բնական գազի արտահոսքն ու պայթյունները



Բնական գազը մենք բոլորս օգտագործում ենք մեր բնակարաններում, որպես հարմար եւ մատչելի վառելիք: Մոտեցնում եւ լուցկին գազայրիչին, բացում փականը եւ վերջ, առաջանում է ջերմային եւ նույնիսկ լուսային էներգիա, որը հեշտ է վերահսկել եւ օգտագործել:

Բայց արդյո՞ք այդ ամենն այդքան անվտանգ է եւ ապահով: Բնական գազը արդյունահանում են գազի հանքավայրերում, որտեղից այն գազի խողովակներով հասնում է մեր գազօջախներին, գազի կաթսաներին եւ ջեռուցման սարքավորումներին: Բնական գազի հիմնական բաղադրիչը համարվում է մեթանը: Մեթանը, խառնվելով օդի հետ, 5-15% դեպքերում պայթյունավտանգ է, այսինքն, կրակի հետ առնչվելիս այդ խառնուրդն ակնթարթորեն հրդեհվում է՝ արտադրելով մեծ քանակությամբ ջերմություն: Այդ ժամանակ ճնշումը 10 անգամ բարձրանում է: Պատկերացնենք՝ 100 մետր խորանարդ մակերես ունեցող տարածքում 5-15 մետր խորանարդ գազ է լցվել (այդ դեպքում գազի հոսքը անտանելի կլինի) եւ ինչ-որ մեկը փորձում է լույս վառել, որպեսզի պարզի, թե որտեղից է գալիս այդ հոսքը: Նա ոչինչ չի կարողանա եւ չի հասցնի պարզել, քանի որ պայթյուն տեղի կունենա:

Բնական գազը գույն, համ եւ հոտ չունի: Դրան արհեստական հոտ են հաղորդում, իսկ հոտի ինտենսիվությունն այնպես են բաշխում, որպեսզի մարդն զգա այն, մինչեւ գազի ծավալի 1%-ի հասնելը:

Յիշեցնենք, որ այդ դեպքերում էլեկտրական սարքավորումներից օգտվել չի կարելի: Բնական գազի հրդեհման ջերմաստիճանը մոտ 750 աստիճան է ըստ Ցելսիուսի, իսկ դա ցանկացած էլեկտրական կայծի եւ նույնիսկ այրված ծխախոտի ջերմաստիճանն է:

Այդ դեպքում արագ բացեք դռներն ու պատուհանները, որպեսզի տարածքն օդափոխվի: Բնական գազը օդից երկու անգամ թեթեւ է, եւ այն շատ արագ դուրս կգա ձեր բնակարանից:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ

կենցաղային գազի արտահոսքի եւ պայթյունի պատճառներից ամենահաճախ հանդիպողը մարդկային գործոնն է:

Գազի արտահոսքը կարող է մեծ վտանգ ներկայացնել մարդկանց համար: Գազը ոչ միայն թունավոր նյութ է, այլեւ կարող է այրվել եւ փակ տարածության մեջ պայթյունի պատճառ դառնալ: Պետք է շատ զգույշ վարվել գազի վառարանի եւ գազի բալոնի հետ, իմանալ, թե ինչպես վարվել գազի արտահոսքի դեպքում, ում դիմել եւ ինչպես փրկել մարդկանց, ովքեր երկար ժամանակ գտնվել են այն վայրում, որտեղ գազի արտահոսք է եղել:

Գազի օգտագործման անվտանգության կանոնները պետք է շատ լավ իմանան նաեւ մեր երեխաները: Դա հատկապես ակտուալ է հիմա՝ ամառային արձակուրդների ժամանակ, երբ երեխաները հաճախ են տանը մեկ մնում եւ ամեն ինչ ինքնուրույն են անում, քանի որ ծնողներն աշխատավայրում են: Այդ ժամանակ նրանք հաճախ են զանգահարում երեխաներին, որպեսզի իմանան՝ ինչպե՞ս են նրանք, արդյոք նրանց մոտ ամեն ինչ կարգի՞ն է կամ ինչ-որ բան տեղի չի՞ ունեցել: Իսկ նրանց հետ շատ բան կարող է տեղի ունենալ: Մեր երեխաները պետք է իմանան, որ գազի արտահոսքը չափազանց վտանգավոր է: Ներշնչելով բնական գազը՝ մարդը կարող է թունավորվել եւ նույնիսկ մահանալ: Գազը կարող է պայթել՝ դառնալով ավերածության եւ հրդեհի պատճառ: Բավական է փոքր կայծ, որպեսզի գազը հրդեհվի: Ահա թե ինչու գազի սարքավորումներից պետք է շատ զգույշ օգտվել եւ միշտ հետեւել դրանցից օգտվելու անվտանգության կանոններին:

Վառելիքի համար օգտագործվող բնական գազը անվտանգ է այն դեպքում, երբ ընտանիքի անդամները խստորեն հետևում են անվտանգության կանոններին: Ռիսկի մի ենթարկեք ձեզ եւ ձեր հարեւաններին: Պետք չէ մոռանալ, որ գազի արտահոսքն օդի եւ գազի խառնուրդ է առաջացնում, որը հրդեհավտանգ է պայթյունավտանգ է: Վթարային իրավիճակների առաջացման պատճառներն են գազի սարքավորումների օգտագործումը՝ փակ պատուհանների եւ դռների պայմաններում, օդափոխության համակարգի բացա-

կայությունը, միացված վիճակում գազի սարքավորումներին չհետեւելը եւ երեխաներին դրանց մոտ միայնակ թողնելը:

Բնական գազի օգտագործման ժամանակ արգելվում է ինքնուրույն կամ որեւէ մեկի օգնությամբ բնակարանում կամ տանը գազաֆիկացման աշխատանքներ կատարել, տեղափոխել, փոխել կամ վերանորոգել գազի սարքավորումները, կատարել վերապահավորում այն տարածքում, որտեղ գազի սարքավորում է տեղադրված, գազի սարքավորումների նախագծման մեջ փոփոխություններ կատարել, փոխել օդափոխման համակարգերը, փակել օդափոխման ուղիները, խցանել ծխնելույզի անցքերը, ինչպես նաեւ քնել եւ հանգստանալ այն վայրերում, որտեղ տեղադրված են գազի համակարգեր:

Ոչ մի դեպքում չի կարելի օգտագործել անսարք վիճակում գտնվող գազի սարքավորումները: Եթե հայտնաբերեք անսարքություններ եւ գազի հոտ զգաք, փակեք գազի փականները, կրակ մի վառեք եւ էլեկտրական սարքավորումներ մի միացրեք: Օդափոխեք տարածքը եւ անհապաղ զանգահարեք ճգնաժամային կառավարման կենտրոն՝ 911 հեռախոսահամարով:

Մի մոռացեք նաեւ գազօջախից օգտվելու ամենօրյա կանոնների մասին: Միացված գազօջախն առանց հսկողության մի թողեք, որպեսզի դրա վրա եռացող ջուրը, կաթը կամ ապուրը չլցվի կրակի վրա: Իսկ եթե, այնուամենայնիվ, դա տեղի է ունեցել, սկզբում անջատեք գազօջախը եւ հետո նոր մաքրեք այն: Երբեք մի օգտագործեք գազօջախը ջեռուցման համար: Մի ծանրաբեռներ գազի խողովակները, վրան ոչինչ մի գցեք եւ մի հարվածեք գազի խողովակներին:

Գազից եւ գազի հետեւանքով ոչ լրիվ այրված մթերքից թունավորվածներին առաջին օգնություն ցույց տալու մասին

Գազից թունավորվելու առաջին նախաձեռնումներն են գլխացավը, գլխում ծանրության զգացողությունը, սրտի արագ աշխատանքը, աղմուկն ականջներում, գլխապտույտը, ընդհանուր թուլությունը, հետագայում սրտխառնոցը, փսխումը, քնկոտությունը, դողը եւ կապտելը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

ջին երեք տարվա ընթացքում քաղաքական, հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալաների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչեւ 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ) ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառնությունների բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):
- Մրցույթը կկայանա 07.09.2012 թ.՝ ժամը 10:00-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8)

Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝

- դիմում՝ մրցության հանձնաժողովի անունով (ծելը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
 - տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները, արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը, կամ համապատասխան տեղեկանք,
 - մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափի,
 - անձնագրի պատճենը:
- Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչեւ 12.30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթի պետք է ներկայանան ՀՀ անձնագրով:
- Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 10.08.2012թ.**

ՀՀ քաղաքացիները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար կարող են դիմել նախարարության աշխատակազմ:

(ք. Երեւան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, հեռ. 31-77-31):



Առաջին օգնություն ցույց տալու համար տուժածին հանք օդափոխված տարածք, քանդեք շնչառությունը խոչընդոտող հագուստը, տվեք անուշադրի սպիրտ շնչի եւ տաք թեյ խմեցրեք: Միեւնույն ժամանակ դիմեք շտապօգնությանը, եւ մինչեւ դրա տեղ հասնելը, ծածկեք տուժածին եւ մի թողեք, որ նա քնի: Եթե նա դադարի շնչել, անմիջապես անցեք արհեստական շնչառությանը: Սակայն գիտակցության կորստի դեպքում արհեստական շնչառություն տալ պետք չէ:

Ծիշք օգտագործեք գազը


Որպեսզի կապույտ վառելիքը ջերմություն եւ հարմարավետություն բերի ձեր տան մեջ, իսկ մարդկանց կյանքը վտանգի չենթարկվի, անհրաժեշտ է հիշել գազի վտանգավոր գործոնների մասին, խիստ հետեւել կենցաղում գազից օգտվելու օրենքներին, հստակ իրականացնել անվտանգության միջոցառումները, որոնք նշված են յուրաքանչյուր գազի սարքավորման անձնագրում, ինչպես նաեւ, հետեւեք համապատասխան մասնագետների տված խորհուրդներին եւ հրահանգներին: Գազի սարքավորումներից անվտանգ օգտվելու պատասխանատվությունը կրում են դրանց սեփականատերերն ու գազից օգտվողները:



Ահ հանրագիտարան

Անցյալ դարի վթարները

Շատ լուսանկարներ ժամանակի ընթացում ավելի հետաքրքրական ու արժեքավոր են դառնում: Օրինակ, անցյալ դարում տեղի ունեցած վթարների լուսանկարները: Դրանցում մենք տեսնում ենք տեխնիկան, որն այժմ թանգարաններում է, ինչպես նաև, թե ինչ է տեղի ունեցել դրա շահագործման ժամանակ:





առաջին օգնություն

Օձերի կծածներ, կարիճների ու միջապսների խայթոցներ

Երկար անձրեւներից, ցրտից հետո ամառը վերջապես եկավ: Բոլորս էլ սիրում ենք այս եղանակին հաճախ լինել բնության գրկում: Մեզանից բացի այս ժամանակը սիրում են նաեւ կենդանիները՝ հատկապես օձերը, կարիճները, բազմաթիվ միջատներ, որոնց հանդիպելը մեզ համար, թերեւս, այնքան էլ հաճելի չէ: Պետք չէ նրանցից վախենալ, պարզապես զգույշ լինենք:

Ինչպես հասկացաք, այսօր կխոսենք թունավոր եւ ոչ թունավոր օձերի կծածների, կարիճների եւ միջատների խայթոցների մասին: Մարդիկ սովորաբար սարսափում են այդ կենդանիների հենց միայն տեսքից ու խուճապի մատնված՝ հաճախ չեն կարողանում ճիշտ գործել: Կան վիճակագրական տվյալներ, որոնց համաձայն՝ օձերի կծածներից մահացածների մոտ 40 տոկոսը մահանում է ոչ թե թույնից, այլ սարսափից: Սակայն իրականում դրանք այնքան էլ սարսափելի չեն, եթե կարողանաք սառնասրտորեն կողմնորոշվել ու ճիշտ օգնություն ցույց տալ:

Հայաստանում հանդիպում են 21 տեսակի օձեր, որոնցից թունավոր են միայն չորսը՝ իծերի ընտանիքին պատկանող տափաստանային իծը, Դարեւսկու իծը, փոքրասիական իծը եւ անդրկովկասյան գյուրզան:

Տափաստանային իծը Հայաստանի տարածքում տարածված է կենտրոնական եւ հյուսիս-արեւմտյան շրջաններում: Փոքր կամ միջին չափերի օձեր են, մարմնի երկարությունը սովորաբար 30-60 սմ է: Թունավոր օձ է, բայց նրա խայթելու հետեւանքով մարդկանց մահացու դեպքեր հայտնի չեն:

Դարեւսկու իծը հանդիպում է Հայաստանի հյուսիսում: Իր արտաքին տեսքով եւ մարմնի չափերով շատ նման է տափաստանային իծին:

Փոքրասիական իծը Հայաստանում տարածված է Արագածի հարավային լանջերից մինչեւ Մեղրու շրջան: Միջին չափերի՝ 60-120 սմ երկարությամբ օձեր են: Շատ թունավոր եւ վտանգավոր են մարդու համար: Անդրկովկասյան գյուրզան տարածված է Հայաստանի հարավային շրջաններում, այն շատ թունավոր օձ է, որի կծելուց հաճախ են լինում մահացության դեպքեր:

Օձերի այս 4 տեսակները պատկանում են իծերի ընտանիքին, որոնց թույնն ազդում է սրտանոթային համակարգի վրա: Թունավոր օձերի վերին ծնոտի առջեւի մասում տեղավորված են 2 խոշոր ժանիքատիպ ատամներ, որոնք կապված են թունավոր գեղձերի հետ:

Հայաստանում ապրող թունավոր օձերը պատկանում են իծերի ընտանիքին եւ ունեն այնպիսի բնորոշ հատկանիշներ, որոնք չունեն ոչ թունավոր օձերը: Դրանց գլխի վերին մասը ծածկված է մանր, անկանոն դասավորված թեփուկներով, որոնք իրենց չափերով նման են մարմնի վրա գտնվող թեփուկներին: Պոչն, ի տարբերություն ոչ թունավոր

օձերի պոչի, կտրուկ ընդհատվում է: Աչքերի բիբը ճեղքած է, այն դեպքում, երբ ոչ թունավորներից կլոր է: Գլուխն ակնհայտորեն առանձնացած է պարանոցից:

Սակայն ոչ մասնագետի համար դժվար է արտաքին հատկանիշներով անսխալ զանազանել թունավոր օձը ոչ թունավորից: Այնինչ օձի կծելուց հետո մաշկի վրա մնացած հետքերով կարելի է հեշտությամբ կողմնորոշվել:

Թունավոր օձի կծած տեղում մարմնի վրա նկատվում են թունավոր ատամներից առաջացած երկու խոր վերքեր, որոնց միջեւ երեւում են ոչ թունավոր ատամներից մնացած երկու շարք ավելի մանր հետքեր: Իսկ ոչ թունավոր օձերի կծած տեղում մարմնի վրա երեւում են չորս շարք երկայնական դասավորված կետիկներ:

Թունավորման վտանգավորությունը կախված է օձի չափից, տարիքից, տեսակից: Վերջին առումով առավել վտանգավոր են գյուրզաները: Օձերն ավելի վտանգավոր են ամռանը: Թունավորման ժանրությունը կախված է նաեւ կծածների քանակից, տեղակայումից եւ խորությունից: Առավել վտանգավոր են պարանոցի եւ գլխի շրջանում տեղակայված կծածները, քանի որ այստեղից հետեւանքով կարող է առաջանալ վերին շնչուղիների խցանում: Լուրջ են նաեւ իրանին եւ ձեռքի հատվածում կծածները, որովհետեւ այդ դեպքում թույնը շատ արագ տարածվում է ամբողջ օրգանիզմում:

Կծելու ժամանակ թունավոր օձի թույնը ներարկվում է մարդու մարմին: Կծած տեղում մարդն ուժեղ ցավ եւ այրոց է զգում: Քիչ անց կծած տեղը կարմրում է եւ սկսում այտուցվել: Այտուցը հետզհետե տարածվում է ամբողջ մարմնով, զգացվում է ուժեղ թուլություն, սրտխառնոց, փսխում: Տուժածը կարող է ունենալ գլխապտույտ, տեսողության եւ խոսքի խանգարումներ: Նկատվում են վերջույթների թուլություն կամ զգայունության կորուստ: Տուժածի շնչառությունը դժվարանում է, անոթազարկը՝ հաճախանում: Հնարավոր է արյունահոսություն բերանից, քթից եւ հետամզքից:


Ի՞նչ անել

Ոչ թունավոր օձի կծածի դեպքում վերքը վւացեք եւ ծածկեք մանրեագերծ վիրակապով:

Թունավոր օձի կծածի դեպքում մեծ նշանակություն ունի ժամանակին ցուցաբերված առաջին օգնությունը:

Հնարավորության դեպքում աշխատեք հիշել կծող օձի տեսքը:

Օձի կծելուց հետո առաջին 5 րոպեի ընթացքում սեղմեք կծած տեղի շուրջը, որպեսզի արյուն դուրս հոսի վերքից: Այս գործողությունը թույլ է տալիս որոշ չափով հեռացնել թույնը: Սեղմելը դադարեցրեք, երբ վերքից այլեւս արյուն դուրս չի գալիս: Հանգստացրեք տուժածին, քանի որ նյարդային, գրգռված վիճակն արագացնում է արյան շրջանառությունը՝ նպաստելով մարմնում թույնի



տարածմանը: Հանք բուր գարդերը եւ ճնշող իրերը: Եթե օձը կծել է վերջույթը, ապա անշարժացրեք այն եւ պահեք սրտի մակարդակից ցածր: Սահմանափակեք տուժածի շարժումները, նստեցրեք կամ պառկեցրեք նրան: Թունավոր օձի կծելու դեպքում ճշմարիտ է հետեւյալ ասացվածքը՝ «Օձի կծածը բուժելու ամենաարդյունավետ միջոցը ավտոմեքենայի բանալիներն են»: Ժամանակն այս դեպքում ամենաորոշիչ գործոնն է: Շատ կարեւոր է ահագնազը կամ տուժածի արագ տեղափոխումը հիվանդանոց, սակայն դա պետք է անել պասիվ կերպով՝ բացառելով տուժածի ցանկացած շարժում: Այդ ընթացքում տուժածին խմեցրեք մեծ քանակությամբ հեղուկներ՝ ջուր, հյութ, թեյ, թան եւ այլն: Վերահսկեք տուժածի վիճակը, տվյալները գրանցեք եւ համապատասխան առաջին օգնություն ցուցաբերեք:

Ի՞նչ չի կարելի անել

Կան գործողություններ, որոնք չի կարելի անել օձերի կծածների դեպքում:

Մի արտածծեք թույնը բերանով. բերանում եղած անգամ փոքր վերքից թույնը կարող է անցնել ձեր օրգանիզմ:

Կծած տեղի շրջանում կտրվածքներ մի արեք, մի՛ այրեք կծած տեղը. ցավն արագացնում է արյան շրջանառությունը, ինչը նպաստում է թույնի տարածմանը:

Մի օգտագործեք սառը թրջոցներ եւ սառցապարկեր. դրանք օգուտ չեն տա տուժածին եւ կարող են նրա ինքնագիտակցությունը վատացնել:

Օձերի կծածների դեպքում չի կարելի տեղադրել լարան՝ սեղմող միջոցներ. սա կբերի տվյալ հատվածի հյուսվածքների մեկուսացման, ինչի հետեւանքով տուժածը կարող է կորցնել վերջույթը:

Տուժածին մի՛ տվեք ոգելից խմիչքներ. որոնք եւս արագացնում են արյան շրջանառությունը:

Կարիճների ու միջապսների խայթոցներ

Հայաստանում տարածված են երեք տեսակի կարիճներ՝ դեղին, սեւ եւ խայտաբղետ: Այս կարիճների եւ ընդհանրապես միջատների խայթոցները մահացու չեն մարդու համար: Մահացության դեպքերը հիմնա-

կանում պայմանավորված են սուր ալերգիկ ռեակցիաներով: Ավելի վտանգավոր են բերանի խոռոչում կամ նրա շուրջը տեղակայված խայթոցները, որովհետեւ այդ դեպքում զարգանում է վերին շնչուղիների այտուց եւ շնչառության խիստ դժվարացում:

Կարիճների եւ միջատների խայթոցների ժամանակ խայթած տեղում ցավ է լինում, այտուց, կարմրություն: Նման դեպքերում օգնություն ցուցաբերելիս մաշկի վրայից հեռացրեք խայթը եւ վնասված մասը պահեք սառը ջրի տակ: Այնուհետեւ վերքը ծածկեք մաքուր գործվածքով:

Ի՞նչ անել

Եթե խայթոցը պարանոցի կամ բերանի շրջանում է, ապա տուժածին կուն-կուն խմեցրեք մեծ քանակությամբ սառը ջուր: Պարզեք՝ տուժածն ունի՞ր արյոցը ալերգիա միջատների խայթոցներից: Եթե տուժածը ալերգիկ է, ապա այս դեպքում նրա մեջ հնարավոր է զարգանա անաֆիլակտիկ շոկ: Դա որեւէ արտաքին ազդակի նկատմամբ մարմնի սուր ալերգիկ ռեակցիան է: Անաֆիլակտիկ շոկը կարող է զարգանալ միջատների խայթոցներից, որոշ դեղամիջոցներից: Դա կատարվում է շատ արագ, եւ հաճախ հնարավոր չի լինում կանխատեսել ու կանխարգելել այն:

Նման դեպքերում տուժածի մոտ լինում են գլխացավ, գիտակցության խանգարում, մաշկի կարմրություն, տաքություն, ցան, այտուցներ: Տուժածի շնչառությունը շնչուղիների այտուցման հետեւանքով դժվարացած է, աղմկոտ, անոթազարկը՝ թույլ եւ արագացած:

Անաֆիլակտիկ շոկի դեպքում անհապաղ ահագնազեք շտապօգնություն, եւ եթե տուժածն իր մոտ պահում է հակաալերգիկ դեղամիջոցներ, ապա օգնեք նրան ընդունել դրանք:

Կանխարգելում

Օձերի կծածներից, կարիճների եւ միջատների խայթոցներից կարելի է խուսափել՝ պահպանելով մի շարք պարզ, կանխարգելիչ կանոններ: Բնության գրկում զբոսնելու, հանգստանալու, արշավների կամ էլ աշխատանքի ժամանակ հագեք բաց գույնի հագուստ, որի վրա լավ երեւում են մուգ գույնի միջատները: Հագեք նաեւ երկարաճիտ եւ ամուր կոշիկներ: Տաքատի փողքերը դրեք գուլպայի կամ կոշիկների մեջ, շապիկի եզրերը՝ տաքատի մեջ: Զբոսնելիս քայլեք ծառուղու մեջտեղով, խուսափեք բարձր ծառերից: Օձի պատահելիս մի տրորեք, մի անհանգստացրեք նրան, ետ դարձեք նույն ճանապարհով, որով եկել եք եւ եղեք ուշադիր, որովհետեւ շուրջը կարող են լինել ուրիշ օձեր:

Վերադառնալով տուն՝ ուշադիր զննեք ձեր մարմինը, հատկապես մազածածկ մասերը՝ միջատներ կամ նրանց խայթոցներ հայտնաբերելու համար:

րագանցում է 9 կգ-ը՝ թեւերի 3 մ բացվածքի հետ), պլաստմասը նրանց համար շատ կոշտ է:

Բնական, էկոլոգիապես մաքուր միջավայրում այս թռչունների կյանքի միջին տևողությունը 50 տարի է: Դժբախտաբար, ներկա պահին երկարակյաց մազատրոսները հազվադեպ են պատահում, ալբատրոսների 40 տոկոսը գոհվում է՝ պլաստմաս կուլ տալով (ամեն 5 րոպե մեկ ալբատրոս է սատկում): Թռչնի քայքայումից հետո բառացիորեն աղբի կույտ է մնում:

Պլաստմասի որոշ տեսակներ նստում են հատակին՝ հանգեցնելով բնական էկոհամակարգերի արմատական վերափոխումներին:

3.4. Հացորդ անգամ մեկանգամյա սղաժից օգտվելիս հիշե՛ք փեռավորների ճակատագրի մասին:

Խաղաղ օվկիանոսում պլաստմասե աղբի առեւելի մի կույտ է լողում, որի չափերը հասնում են 1 760 000 քառակուսի կիլոմետրի: Դա նշանակում է երեք Իսպանիայի եւ Պորտուգալիայի տարածք միասին վերցրած: «Պլաստմասե մայրցամաքի»հաստությունը արդեն 10 մետր է: Դրա 80 տոկոսը ցամաքից լցված աղբն է, 20-ը՝ նավերից թափվածը:

Մի քանի տարի է, ինչ այդ կույտը «խնամքով հավաքում» են ծովի հոսանքները: Այստեղ ինչ ասես, որ չկա. պլաստիկե շշեր, խցաններ, մեկանգամյա ներարկիչներ, խաղալիքներ, տոպրակներ եւ այլն: Ամեն տարի 260 միլիոն տոննա պլաստմասե առարկա իր դարձ ավարտում է Համաշխարհային օվկիանոսում: Պլաստիկի այս ամբողջ աղբը ցամաքից օվկիանոս է քշվում գետերի, գետակների ու ծովի ալիքների

Խաղաղ օվկիանոսի պլաստմասե մարդասպանները



կողմից: Այդ աղբն այսօր լուրջ վտանգ է ներկայացնում կենդանի օրգանիզմների համար: Դրանցով թունավորվում են կրիաները, ձկները, ծովային կաթնատուները, թռչունները: Պլաստմասի միկրոմասնիկների մա-

կերեսին նստում են տարբեր աղտոտող նյութեր, որոնք հետո հայտնվում են կենդանիների օրգանիզմում:

Պլաստմասի արտադրությունն ամեն տարի աճում է 9 տոկոսով, իսկ դա նշանակում է, որ Համաշխարհային օվկիանոսի աղտոտումը պլաստմասե աղբով միայն շարունակվելու է: Դրանից հատկապես շատ են տուժում ալբատրոսները, որոնք թռիչքի բարձրությունից սխալմամբ պլաստմասի գունավոր մասնիկներն ինչ-որ ուտելու բանի հետ են խառնում:

Պլասմասը կուտակվում է ալբատրոսների աղետամոլոքային տրակտում՝ հանգեցնելով թունավորումների ու խցանումների:

Չմայած նրան, որ ալբատրոսը մոլորակի ամենախոշոր թռչուններից է (նրա քաշը գե-



Ո՞վ է վախենում ջրից

Ոմանց համար ամառը զուգորդվում է ջրի հետ, առանց որի անհնար է պատկերացնել ամառային հանգիստը: Սակայն կան մարդիկ, ովքեր անբացատրելի ձեռով վախենում են կամ շատ անտարբեր են ջրի նկատմամբ: Ովքեր վախենում են, գրեթե ջուրը չեն մտնում, իսկ ոմանց համար էլ ջուրը ոչ մի հետաքրքրություն չի առաջացնում, ընդամենը մի փոքր թրջվում են և անմիջապես վերադառնում ափ:

«Ջրում ես ինձ զգում եմ ինչպես ձուկ», - այս արտահայտությունը ոչ բոլորն է, որ անում են: Մեկն ամբողջ կյանքում զբաղվել է լողով եւ այլևս հետաքրքրություն չունի ծովի նկատմամբ, մյուսը՝ փոքր տարիքում հոգեբանական տրավմա է ստացել, օր.՝ հազիվ է խուսափել խեղդվելուց, կամ մարզիչն անզգուշաբար երեխային հրել է լողավազանը դասի ժամանակ, իսկ ոմանց համար էլ ծովի ջուրը միշտ սառն է:

Շատ են դեպքերը, երբ մարդն իրականում չի գիտակցում, որ վախենում է լողալուց: Ծովն ավելի անվերահսկելի եւ անկանխատեսելի է քան ցամաքը, եւ այդ մասին մեզ անընդհատ հիշեցնում է մեր կոլեկտիվ անգիտակցականը, որը ստիպում է, որ մեզ զգանք թույլ եւ անպաշտպան: Նման զգացողությունը շատ նորմալ երեւույթ է, քանի որ այդպես զգում է արոճֆեսիոնալ լողորդները: Այսպիսով, լողալուց հաճույք ստանալն ուղեկցվում է անբացատրելի վախով, քանի որ լողալու ժամանակ մարդը գտնվում է «լինելու» եւ «չլինելու» միջեւ: Մարդու կյանքի ամենաառաջին տարիքը ջուրն է, քանի որ սաղմը ձեւավորվում եւ զարգանում է սաղմնային ջրերում, որը երեխային պաշտպանում է արտաքին ազդեցություններից: Այստեղ շատ կարելու է մոր վերաբերմունքն իր հղիության եւ սաղմի նկատմամբ: Այսինքն՝ մայրն ուրախ է, թե ոչ, որ բալիկի է սպասում: Սաղմը սերտորեն կապված է մոր հետ, ուստի շատ կարելու

են մոր բոլոր հույզերը հղիության ընթացքում: Դրանք բոլորը փոխանցվում եւ պահպանվում են մեր ամբողջ կյանքի ընթացքում եւ իրենց մասին հիշեցնում են, երբ արդեն մարդը հանդիպում է ծովի հետ: Եթե երեխան իրեն երջանիկ է զգացել մայրիկի փորիկում, ապա հետագայում նա այդ երջանկության զգացողությունը վերապրում է ծովում կամ ջրում լողալիս: Սա տարբերակներից մեկն է, որը կարող է խանգարել կամ նպաստել մարդուն ջրի հետ շփման ժամանակ:

Մյուս պատճառներից մեկը կարող է լինել առաջին չհաջողված փորձը: Եթե մայրն իր փոքրիկին լողացնում է միայն իր պարտքը կատարելու, այլ ոչ թե այդ ընթացքը նրա հետ համատեղ վայելելու համար, ապա այդ հույզերը նույնպես փոխանցվում են փոքրիկին: Ուստի, սիրելի մայրիկներ, ձեր փոքրիկին տրամադրած ցանկացած ժամանակ անցկացրեք սիրով ու հաճույքով:

Վախը ջրի նկատմամբ կարող է առաջանալ նաեւ ավելի ուշ տարիքում, երբ ծնողներն ականա վախեցնում են երեխային: «Չեռու մի զնա, կխեղդվես»... Նման խոսքերը դաջվում են երեխայի մեջ, եւ հետագայում ղեկավարում են նրա վախերը ջրի նկատմամբ:

Ոչ բավարար փորձ ունենալը նույնպես կարող է նպաստել վախի ձեւավորմանը, քանի որ սկսանք չգիտի, թե իրեն ինչպես պահի ջրում:

Ջրից խուսափելուն կարող են նպաստել մանուկ ժամանակ տրավմատիկ փորձը՝ դժբախտ պատահարը, որին երեխան ականատես է եղել, առաջ ցնցուղը՝ որպես պատիժ երեխային եւ այլն:

Լողալուց հաճույք ստանալը եւս արվեստ է, որին կարող է տիրապետել յուրաքանչյուր մարդ:

Ի՞նչ անել

1. Սովորեք «ջրային» շնչառություն
Ոչ բոլորն են սիրում իջեցնել դեմքը



ջրի մեջ, քանի որ հաճելի չէ, երբ ջուրը լցվում է քիթը եւ ականջները: Սկսեք վարժություններ անել արդեն ցամաքից սկսված՝ ներշնչեք բերանով եւ արտաշնչեք թթվ: Այնուհետեւ այդ ամենն աստիճանաբար իրականացրեք ջրում: Չաջորդ քայլը՝ դրեք ջրային ակնոցներ եւ փորձեք ուսումնասիրել ջրի հատակը, որը ձեր մեջ վստահություն կառաջացնի:

2. Շատ մի հեռացեք

Այն միտքը, որ ջրի հոսքը կարող է տանել շատ հեռու, անհասկանալի ուղղությամբ, արդեն վախեցնում է մարդուն: Այդ իսկ պատճառով շատ կարելու պայման է ոտքերի տակ հողմ զգալը: Մտեք ջուրը եւ ձեռքի ափերով հավելք հատակին, ընդունեք պառկած դիրք, սկզբում բաց թողեք մի ձեռքը, հետո՝ մյուսը: Փորձեք ձեզ պահել ջրի վրա: Այնուհետեւ փորձեք իրականացնել վարժություններ, որոնք կօգնեն ձեզ ժամանակավորապես չզգալ ջրի հատակը, օրինակ՝ ցատկեք, պարեք ջրի մեջ եւ այլն:

3. Թեթեւ վերաբերվեք

Սկսնակ լողորդներն ավելի շատ ուժ եւ

էներգիա են ծախսում մարմինը ջրի վրա պահելու համար, սակայն այդ լարվածությունն ավելի շատ խանգարում է լողալուն, քան օգնում: Որքան թեթեւ լինեք եւ որքան ձեր մարմինը թեթեւ զգաք, այնքան կօգնեք ձեզ: Փորձեք լիքեթափվել ջրում, այլ ոչ թե լարվել: Լողին վերաբերվեք որպես խաղի: Օգտագործեք լողի համար նախատեսված օգնող տախտակներ եւ այլ հարմարանքներ: Փորձեք աստիճանաբար քչացնել մարմնի լարվածությունը:

4. Ծովի բնակիչները

Այն միտքը, որ ջրում կարող են հանդիպել կենդանիներ, ջրային բույսեր եւ այլն, կարող է լուրջ վախի պատճառ լինել: Լսեք ձեր հույզերը, դրեք ջրային ակնոցները եւ վայելեք այն հրաշքը, որ ջրի տակ է լինում միայն: Լսեք ձայները, որոնք հնարավոր են ջրում, վայելեք լույսի արտացոլումն ու դրանից առաջացած տեսարանները: Այս ամենը ձեզ կօգնի համոզվել, որ ծովն այդքան էլ վտանգավոր ու սարսափելի չէ, որքան դուք պատկերացնում եք:

Ցանկանում եմք բոլորին ապահով եւ լիարժեք հանգիստ:

**«Իմ երեխան ինձ հարվածում է»:
Շատերի համար շատ դժվար է պատկերացնել, որ 2 տարեկան երեխան արդեն կարողանում է հարվածել ծնողներին, ընկերներին:**

Դժվար է պատկերացնել, որ փոքրիկ երեխան ընդունակ է անընդհատ նեղացնել իր բակի կամ մանկապարտեզի ընկերներին: Ի՞նչ է կատարվում երեխայի հետ: Այս հարցը շատ է անհագստացնում ծնողներին: Այսօր կփորձենք բացատրել, թե ինչ է իրականում թաքնված երեխայի նմանատիպ վարքի հետեւում:

Երբ ձեր փոքրիկն առաջին անգամ հարվածել կամ ապտակել է ձեզ, ցույց տալով իր դժգոհ լինելը, դուք այդ ժամանակ անտեսել եք, ուշադրություն չեք դարձրել: Այնուհետեւ նա առանց առիթի սկսում է հարվածել բոլորին: Դուք չգիտեք՝ ինչպես վարվեք եւ ինչպես վերաբերվեք երեխային: Արդյո՞ք պետք է թույլ տալ, որ երեխան արտահայտի իր զայրույթն այդ ճանապարհով, ոչինչ չանել, սպասել այնքան ժամանակ, որ երեխան աստիճանաբար մեղմացնի իր վարքը, թե՞ պետք է նրան պատասխանել նույն ձեւով, թե՞ երեխայի հետ պարբերաբար ունենալ այդ թեմայով զրույցներ:

Առաջին հերթին պետք է հասկանալ, թե ինչն է դրդում երեխային իրեն այդպես պահել: Պետք է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները, նյարդային համակարգը, ընտանեկան իրավիճակը: Շատ կարելու է, որ ծնողները գիտակցեն, թե ինչ հույզեր են թաքնված երեխայի նման ֆիզիկական ագրեսիայի հիմքում: Որպես կանոն՝ երեխան առաջին անգամ ագրեսիվ վարք ցուցաբերում է ի պատասխան ծնող-

Երբ երեխան հարվածում է

Ների արգելքների եւ սահմանափակումների: Մի կողմից երեխայի նման վարքը բնական է եւ բացատրելի: Երեխան չի կարող ընթերցումով մոտենալ այն հանգամանքին, թե ինչու իր որոշ պահանջներ չեն կարող բավարարվել՝ օրինակ, «Չայրիկը չի կարող քեզ հետ գնալ զբոսնելու, քանի որ հիմա ընթրում է»: Երեխային դեռ կառավարում են իր ցանկությունները: Միայն տարիքի հետ է երեխան սկսում սովորել կառավարել իր հույզերը, ցանկությունները, այսինքն՝ սովորում է սպասել, համբերել, հրաժարվել ինչ-որ բանից: Երեխան դեռ մեծի նման չի կարող իր հույզերն ապրել իր ներսում, նա այդ պահին ինչ զգում է, անմիջապես արտահայտում է: Ծնողների խնդիրը չէ երեխային համոզել, որ պետք չէ բարկանալ, այլ պետք է նրան սովորեցնել, որ պետք է այդ հույզերն արտահայտել շրջապատին չվնասելու տարբերակով:

Սահմանների կառուցում

Երբեք երեխային մի ասեք, որ նա շատ թույլ է հարվածում եւ դրանով չի ցավեցնում դիմացիներին, կամ երբեք ձեզ մի հանգստացրեք, որ դա երեխայի բնավորությունն է: Պետք է երեխային հասկացնեք, որ կան սահմաններ, որոնք պետք չէ անցնել: Երբ երեխան ձեզ հարվածում է, ավելի նպատակահարմար է, որ դուք պատասխանեք. «Ծնողներին հարվածել չի կարելի, դա կանոն է»: Որքան շուտ դուք հաստատեք այդ սահմանները, կանոնները, այնքան քիչ երեխան կարտահայտի նմանատիպ վարք: Այստեղ շատ կարելու է հաջորդականությունը, այսինքն՝ պետք չէ

Երբ երեխան հարվածում է

երեխայի միեւնույն վարքը գնահատել տարբեր ձեւերով՝ կախված ձեր տրամադրությունից, իրավիճակից: Սահմանափակումների եւ կանոնների սանդղակը պետք է հստակ եւ կայուն լինի: Քանի որ այդ հստակությունից եւ կայունությունից էլ է կախված երեխայի ներքին կյանքի ճիշտ ձեւավորումը: Երեխայի մեծանալուն պես անհրաժեշտ է սահմանափակումները համապատասխանեցնել երեխայի տարիքային առանձնահատկություններին, որպեսզի չստեղծվի անհամապատասխանելիություն տարիքային պահանջների եւ սահմանների միջեւ: Այդ անհամատեղելիությունը կարող է պատճառ հանդիսանալ երեխայի մեջ ագրեսիվ վարքի ձեւավորման համար:

Չարվածին պատասխանել հարվածով

Երբեք այդ սխալը թույլ չտաք, երբեք երեխային չհարվածեք՝ որպես նրա հարվածի պատասխան: Այդպես դուք նպաստում եք ագրեսիայի դրսեւորմանը ձեր ընտանիքում: Երեխայի հուզական կայունությունը կախված է նրանից, թե որքան են կարողանում ծնողները կառավարել իրենց հույզերը, չարտահայտել իրենց զայրույթն ագրեսիվ ճանապարհով: Երեխան սովորում է ձեզանից, թե ինչպես իր հույզերին համապատասխան վարվի: Երբ դուք երեխային ապտակեք կամ հարվածեք իր նման պահվածքի համար, ապա համոզված եղեք, որ նա կրկնօրինակելու է ձեր այդ վարքը, ու եթե տան սահմաններում էլ չկիրառի, ապա տան պատերից դուրս ան-



պայման նման պահվածքը կդառնա նրա վարքի անբաժանելի մասը:

Անկախ ամեն ինչից, թե երեխայի նման ագրեսիվ պահվածքն ինչի հետեւանք է, շատ կարելու է, որ ծնողները շատ լուրջ մոտենան այդ հարցին եւ փորձեն այն շտկել, բացատրել, որ այդպես վարվել չի կարելի: Շատ հաճախ երեխաներն իրենց ագրեսիվ են պահում, երբ իրենց անապահով եւ վտանգված են զգում, այսինքն՝ նման վարքը պաշտպանական ֆունկցիա է կատարում երեխայի համար: Այս դեպքում երեխային անընդհատ սաստելու փոխարեն նրան սովորեցրեք հասակակիցների հետ շփվելու ձեւերը՝ ծանոթանալ, խաղեր կազմակերպել, բացատրել, թե չփման ինչ կանոններ կան: Այս հմտությունները երեխային հնարավորություն կտան, որ նա չվախենա իր շրջապատից եւ պաշտպանված զգա իրեն:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու



հանրային առողջություն

Ով երկար է նստած մնում, քիչ է ապրում

Ամերիկացի բժիշկները եկել են այն եզրակացության, որ եթե մարդն օրվա ընթացքում երեք ժամից ավելի նստած դիրքում չմնա, դա կերկարացնի նրա կյանքի տևողությունը մոտ երկու տարով:

Իսկ եթե օրվա ընթացքում հեռուստացույց դիտելու տևողությունը կրճատենք մինչև երկու ժամի, ապա մեր կյանքը կերկարի եւս 1,4 տարով, ասում են գիտնականները: Սակայն փորձագետները նշում են, որ այդ հաշվարկները, որոնք հիմնված են հինգ տարբեր դեմոգրաֆիական ուսումնասիրությունների վրա, չափազանց անվստահելի են անհատի ռիսկը հաշվարկելու համար: Բացի դրանից, բժիշկների տված խորհուրդները շատ բարդ են իրականացման տեսանկյունից:

Նստելը վնասակար է առողջությանը

- Բժիշկների խորհուրդները
- պետք է ամեն օր քայլել,
- մարմնամարզությամբ պետք է զբաղվել ամեն օր՝ քիչ-քիչ, կամ շաբաթական երկու-երեք անգամ՝ ավելի երկար,

- խորհուրդ է տրվում չափավոր ինտենսիվությամբ զբաղվել սպորտով՝ արագ քայլք կամ հեծանվավազք՝ շաբաթական 2,5 ժամից ոչ պակաս,

- օգտակար է շաբաթական երկու-երեք անգամ ծանրաբեռնել մկանները՝ աշխատել այգում կամ ծանրություն բարձրացնել:

Քեմբրիջի համալսարանի ռիսկի գնահատման փորձագետ Դեվիդ Սպիգելհալթերը բավական թերահավատորեն է տրամադրված:

«Խոսքը բնակչության խոշոր խմբերի հետազոտությունների մասին է, եւ այդ պատճառով դժվար է կանխատեսել, թե ինչպես կազդի ֆիզիկական ակտիվության բարձրացումը մեզանից յուրաքանչյուրի վրա: Այժմ շատ քչերն են երեք ժամից պակաս անցկացնում աշխատավայրում, եւ պետք է մեծ լավատես լինել՝ աշխատաժամերի կրճատում ակնկալելու համար», - ասում է փորձագետը:

Բժիշկները խորհուրդ են տալիս զբաղվել մարմնամարզությամբ, հեծանվավազքով եւ արագ քայլքով՝ շաբաթական երկու-սուկես ժամից ոչ պակաս, ինչպես նաեւ, պարբերաբար ծանրաբեռնել մկանները կամ այգում հող փորել:

Բայց նույնիսկ այդ բոլոր խորհուրդները

րին հետեւելը չի ազատի նստակյաց ապրելակերպից, առավել եւս, եթե աշխատանքը պահանջում է գտնվել համակարգչի առջեւ:

Քիչ շարժվելու վրանգը

Սակայն շատանում են այն տվյալները, որոնց համաձայն ակտիվ կենսակերպից հրաժարվելը կարող է բարձրացնել այնպիսի հիվանդությունների առաջացման ռիսկերը, ինչպիսիք են շաքարախտն ու անգինամա:

Այնուամենայնիվ, այդ տվյալները չեն ապացուցում, որ ֆիզիկական պասիվությունն ու նման հիվանդությունների առաջացումը կապ ունեն իրար հետ:

Հետազոտողները նույնպես ընդունում են դա: Նրանք ուսումնասիրել են 167 հազար մարդկանց առողջության ցուցանիշները, սակայն հաշվի չեն առել նրանց կենսակերպի եւ սովորությունների տարբերությունները:

Բժիշկ Փիթեր Կատցմարթինկն ու գիտնական Ի Սին Լին, որոնք մասնակցել են հետազոտություններին, ասում են, որ իրենց հաշվարկները տեսական բնույթ են կրում:

Բրիտանական սրտաբանական հիմնադրամի աշխատակից Նատաշա Սոյուարտը կարծում է, որ ամերիկյան հետազոտու-



թյունների արդյունքներին պետք է զգուշությամբ վերաբերվել:

«Այդ ամերիկյան տվյալները ցույց են տալիս միայն պասիվ կենսակերպի եւ կյանքի տևողության կրճատման միջեւ եղած կապի առկայությունը: Սակայն նրանք հաստատում են այն, ինչը մեզ արդեն հայտնի է. այն է, որ շարժումների պակասը մեծացնում է սիրտ-անոթային հիվանդությունների առաջացման վտանգը», - ասում է Սոյուարտը:

Նամիբիայի սպորտերկրյա ջրերը կարող են փրկել երկիրը երաշտից

Նամիբիայի հյուսիսում հայտնաբերված արտեզյան ջրերի հսկայական պաշարները կարող են կարելու դեր խաղալ ամբողջ հարավարևմտյան Աֆրիկայի զարգացման համար:

Մասնագետների գնահատմամբ՝ եթե այդ կենսատու ջրամբարի ռեսուրսները սպառվեն երկրային տեմպերով, ապա դրանք բավարար կլինեն Նամիբիայի ամբողջ հյուսիսային հատվածը 400 տարի մատակարարելու համար:

Այդ ջուրը մոտ 10 հազար տարեկան է, բայց այն բացարձակապես մաքուր է եւ պիտանի է ընպելու համար:

Հյուսիսային շրջաններում ապրող բնակչությունը՝ մոտ 800 մարդ կամ Նամիբիայի բնակչության 40%-ը, ներկայումս ամբողջությամբ կախված են Անգոլայից մատակարարվող ջրից, որի ջրատարը փորվել է դեռ 40 տարի առաջ:

Կենսատու ջրեր

Վերջին տասնամյակում Նամիբիայի կառավարությունը, համագործակցելով Գերմանիայի եւ այլ եվրոպական երկրների հետ, ակտիվորեն զբաղվում է ջրի ռեսուրսների դեֆիցիտի խնդրի լուծմամբ:

Մերձհասարակածային Աֆրիկայի երկրների շարքում Նամիբիան ունի առավել չորային կլիմա:

Կասկածից վեր է, որ այդ հայտնաբերումը կուրախացնի Նամիբիայի բնակչությանը: Սակայն պետք է հիշել, որ դրանում նաեւ վտանգ է թաքնված: Դրան, օրինակ, կարող են ծառայել հյուսիսային Աֆրիկայի երկրները՝ նախ եւ առաջ Թունիսն ու Լիբիան, որտեղ 70 տարի առաջ նույնպես հատնաբերվել էին ստորերկրյա ջրերի մեծ պաշարներ, որոնք ձգվում էին ծովափից մինչև Սահարա անապատի խորքերը:

Այն ժամանակ այդ երկրներն անմիջապես անցան հորատման եւ պոմպերով ջրերի քաշման աշխատանքներին, որոնք 3 միլիոն տարի կուտակվում էին գետնի տակ: Երկու երկրների իշխանությունները նպատակ էին դրել, եվրոպական ստանդարտների համաձայն, օրական 250 լիտր ջուր ապահովել բնակչության համար:

Առաջին տարիներին ջուրը քաշում էին 50 մետր խորությունից, իսկ հետագայում այն սկսեց տարեցտարի ավելի խորանալ: Այժմ այդ ջուրը ստիպված են ստանալ հզոր պոմպակայանների միջոցով՝ 2,5 կիլոմետր խորությունից, եւ այն ունի 200 աստիճան ջերմություն ըստ Ցելսիուսի:

Ոռոգվող գյուղատնտեսությանն անցնելն իր հետ միլիոնավոր արմավենիների ոչնչացում բերեց, որոնք աճում էին ստորերկրյա ջրերի շնորհիվ, դա էլ, իր հերթին, հանգեցրեց հյուսիսային Աֆրիկայի կենդանական եւ բուսական շատ տեսակների անհետացմանը:

Ենթադրվում է, որ այդ ջրամբարի ռեսուրսները մոտակա 10-12 տարիների ընթացքում կսպառվեն: Ինչ անել դրանից հետո, ոչ ոք չգիտի:

Եվ ահա վերջերս գերմանացի մասնագետները հայտնաբերել են բավական լայն ստորերկրյա ջրերի շերտ՝ «Օհանգվենա 2» անվամբ, որը 70-ը 40 կմ-ի մակերես ունի եւ գտնվում է Անգոլայի հետ սահմանին՝ Նամիբիայի տարածքում:

Ծրագրի ղեկավար եւ Գերմանիայի երկրաֆիզիկայի եւ բնական պաշարների ինստիտուտի դասախոս Մարտին Քվինգերի խոսքերով, այդ շերտը կարող է ջրով ապահովել տեղի բնակչությանը պարբերաբար տեղի ունեցող երաշտների ժամանակ:

Ներկայումս տեղի ագարակատերերը ամբողջովին կախված են երկու գետերով հոսող ջրերից, որոնք հոսում են սահմանի մոտով եւ չորանում են ամռան ամիսներին: Դա սահմանափակում է օգտակար բերքի աճեցման հնարավորությունները, եւ նրանք հողագործությամբ են զբաղվում միայն այն հովիտներում, որտեղով հոսում են այդ գետերը:

Հորատման վտանգը

Այդ ջրամբարի քաղցրահամ ջուրը գտնվում է ոչ մեծ ճմձման տակ, հետեւաբար, դրա քաշելը համեմատաբար ոչ բարդ եւ քիչ ծախսատար աշխատանք է:

Սակայն բարդությունը կայանում է նրանում, որ այդ շերտը գտնվում է աղի ջրի շերտի տակ, եւ հորատման ընթացքում այն կարող է աղտոտվել:

«Եթե տեղի բնակիչները չհետեւեն մեր տեխնիկական խորհուրդներին, նրանք կարող են հիդրավիկ կամուրջ ստեղծել ջրի երկու շերտերի միջեւ», - ասում է Քվինգերը:

Ճարտարագետների գնահատմամբ, գտնված քաղցրահամ ջրի պաշարներն անասնապահներին եւ հողագործներին կարող են 15 տարի պաշտպանել երաշտի հետեւանքներից:

Եվհամիությունը ֆինանսավորում է Նամիբիայի բնակչությանը ջրի ռեսուրսներից էկոլոգիական մեթոդներով օգտվելու ուսուցանման ծրագիրը:

Եվրոպայում առաջին անգամ առաջարկվեց գենային թերապիայի մեթոդը

Գենային թերապիան վնասված գեների փոխարինումն է նորմալ գեներով՝ գենետիկական ինժեներիայի մեթոդների օգտագործմամբ:

Եվրոպական բժշկության մեջ կարող է շրջադարձային իրադարձություն տեղի ունենալ՝ գենային թերապիայի գործնական կիրառման հաստատմամբ՝ ժառանգական հիվանդությունների բուժման համար:

Եվրոպական բժշկական գործակալությունն առաջարկել է այդ մեթոդը կիրառել հազվագյուտ գենետիկ հիվանդության բուժման համար, որը զրկում է հիվանդին ճարպը մարսելու ունակությունից:

Այդ առաջարկության հիման վրա Եվրոպական հանձնաժողովը պետք է վերջնական որոշում կայացնի այդ մեթոդով բուժելը թույլատրելու համար:

Գենային թերապիայի սկզբունքը բարդ չէ: Եթե մարդու գենետիկական կոդի որեւէ մասում հայտնաբերվում է թերություն, այն փոխարինում են լաբորատորիայում ստեղծված գենետիկ նյութով, որն ունի համապատասխան հատկություններ:

Սակայն իրականում ամեն ինչ այդքան էլ պարզ չէ: ԱՄՆ-ում կլինիկական փորձարկումների ընթացքում մի դեռահաս է մահացել, իսկ մնացած փորձարկվածները հիվանդացել են լեյկեմիայով:

Ներկայումս ոչ Եվրոպայում, ոչ էլ ԱՄՆ-ում գենային թերապիայի մեթոդները չեն կիրառվում:

Առաջին գենային դեղը

Եվրոպական բժշկական հանձնաժողովին առընթեր բժշկական արտադրանքի կոմիտեն վերադարձել է Գլիբերտ դեղամիջոցի օգտագործումը՝ Բյուրգեր Գրյուտցի հիվանդության բուժման համար, որն իրենից ներկայացնում է լիպոպրոտեինիկ պազի ժառանգական անբավարարություն:

Այդ համախտանիշը հանդիպում է մեկ միլիոն մարդկանցից մեկի մոտ: Հիվանդներն ունեն վնասված գենային համակարգ, որը պատասխանատու է մարսողական համակարգի աշխատանքի համար:

Դա հանգեցնում է արյան մեջ ճարպերի կուտակման, աճուկային ցավի եւ սուր պանկրեատիտի:

Մինչ օրս այդպիսի հիվանդների ծանր վիճակի մեղմման միակ տարբերակը շատ խիստ, ճարպագերծ դիետան էր:

Բուժման նոր մեթոդը հիմնված է վիրուսի օգտագործման վրա, որը վարակում է մկանային հյուսվածքները եւ օրգանիզմ է ներարկում չվնասված գենի կրկնօրինակը:

Դա առաջարկվում է այն մարդկանց, ովքեր տառապում են ենթաստամոքսային գեղձի սուր վարակով, պանկրեատիտով եւ նրանց, ում վրա չի ազդում դիետան:

Վնասված գենի փոխարինումը

Նոր դեղի արտադրող դեղագործական Յունի Քյուր ընկերությունը, հայտարարել է, որ դա կարելու իրադարձություն է հիվանդների կյանքում եւ, առհասարակ, բժշկության համար:

Իսկ Յորն Ալդագ ընկերության ղեկավարը հայտարարել է. «Լիպոպրոտեինիկ պազի անբավարարություն ունեցող հիվանդները վախենում են սովորական սնունդ օգտագործել, քանի որ դա կարող է հանգեցնել սուր եւ շատ ցավոտ ենթաստամոքսային գեղձի բորբոքման, որը հաճախ ավարտվում է հոսպիտալացմամբ»:


«Այժմ, առաջին անգամ պատմության մեջ, ստեղծվեց բուժման մեթոդ, որը ոչ միայն իջեցնում է բորբոքման հավանականությունը, այլեւ երկարաժամկետ օգտակար ազդեցություն է ունենում հիվանդի վիճակի վրա», - ավելացրեց նա:

Հիմաստաւոր դարձել է առաջին երկիրը, որը պաշտոնապես թույլատրեց գենային թերապիայի մեթոդի օգտագործումը:



ԱՒ հանրագիտարան

Ուրբո՛ղ զգուշ դի՛ր հողին



1. Կարստային հսկայական ձագարափոս Գվատեմալայում:
Այս հանկարծակի ձեւավորված ձագարափոսում անհետ կորել է երեք մարդ:



2. Մեքենաներն ընկել են անձավների ստորգետնյա համակարգը՝ իտալական
Հալիոպոլի քաղաքում: Տուժածներ չեն եղել: Ձեւավորված ձագարափոսում
անհետ կորել է երեք մարդ:



3. Հսկայական անցքը Իսպանիայի Սան-Սեբաստիան քաղաքում է:
Այն առաջացել է փոթորկից հետո:



4. Անցքը Ֆրանսիայի Լեզ-Արկ քաղաքում հայտնվել է հորդառատ անձրևներից հետո:



5. Բեռնատարը գլորվել է փոսը, երբ Չինաստանի Չանգչուն քաղաքում փլուզվել է
կամուրջը: Տուժել է երկու ուղևոր: Առաջացել է փոթորկից հետո:



6. Չինաստանի Խեբեյ եւ Շանսի գավառները միացնող մայրուղու փլուզված
հատվածը: 100 մ երկարությամբ եւ 10 մ լայնությամբ անցքի առաջանալու
պատճառն անհայտ է: Տուժածներ չեն եղել:



7. Գերմանիայի Նաչտերստեդտ գյուղի ծանապարհի եւ բնակելի շենքի փլուզումը:
Ձագարափոսի առաջանալու հետեւանքով անհետ կորել է երեք մարդ:



8. Չինաստանի Խեբեյ քաղաքի խաչմերուկներից մեկի փլուզումը: Անցքն են
գլորվել տաքսին ու մի քանի մոտոցիկլետ:

[illegible]